

ՄՏԵՓԱՆՈՍ ՏԱՐԱԲՆԵՑԻ ԱՍՈՂԻԿ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԻԶԵՐԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՕՆԵՑԻՆ ԵՒ ՆՐԱ «ՏԻԵՁԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Ստեփանոս Տարօնեցին ապրել է ստեղծագործել է մի ժամանակաշրջանում (Ժ դարի կեսերից մինչև ԺԱ դարի սկիզբը), որը համարուել է «խաղաղ շինարարութեան դար», եւ այդ շնորհիւ Բագրատունիների ռազմաքաղաքական հզօրացման, երբ համեմատաբար դադարել էին օտար նուաճողների ասպատակութիւնները եւ մեղմացել միջֆեոդալական ներքին պառակտումները: Մ. Աբեղեանը գրել է. «Դա մեր ֆեոդալիզմի ամենաբարեբախտ շրջանն է»¹: Այդ ժամանակ յատկապէս զարկ է տրուում եկեղեցաշինութեանը, աշխուժանում է հոգեւոր եւ մշակութային կեանքը, որի զարգացմանն իրենց նպաստն են բերում մի շարք նշանաւոր գործիչներ, այդ թւում նաեւ բանիբուն վարդապետ, պատմիչ Ստեփանոս Տարօնեցին:

Ստեփանոս Տարօնեցի Ասողիկի վերաբերեալ կենսագրական որոշակի մանրամասներ յայտնի չեն: Տարօնեցի անուանումից պէտք է եզրակացնել, որ նա հաւանաբար ծնուել է Մեծ Հայքի Տարօն գաւառում: Ասողիկ կամ Ասողնիկ է անուանուել լաւ ձայն ունենալու եւ ճարտասան լինելու պատճառով:

Ասողիկը, գրելով Անանիա Ա. Մոկացի կաթողիկոսի (946-968) եւ ժամանակի նշանաւոր հոգեւոր գործիչների մասին, նշում է, որ իր «տղայութեան» ժամանակ նրանցից ումանց տեսել է իր աչքով, վայելել նրանց քաղցրաճաշակ խօսքը: Սա նշանակում է, որ այդ ժամանակ Ստեփանոսը դեռեւս պատանի էր: Նա իր գործունէութիւնը ծաւալել է յատկապէս Սարգիս Ա. Սեւանցու (992-1019) կաթողիկոսութեան օրօք, որի պատուէրով էլ գրել է իր «Պատմութիւն»-ը:

Ինչպէս երեւում է Գրիգոր Մագիստրոսի վկայութիւնից, Ստեփանոս Ասողիկը հեղինակել է նաեւ «Մեկնութիւն Երեմիայի մարգարէի» վերտառութեամբ մի երկասիրութիւն²:

Ստեփանոս Ասողիկի «Պատմութեան» բուն վերնագիրը տարակարծութիւնների տեղիք է տուել: Զեռագրերի մեծ մասում այն վերնագրուած է «Պատմութիւն ժամանակաց»: Նախահիմք N 2865 ձեռագրի (XIII դ.) սկիզբը պակաս է, երկրորդ հանդէսը վերնագրուած է «Ստեփանոսի Տարաւնեցույ պատմութիւն բանի ի պատմագրական տառից», այսինքն՝ «Ստեփանոս Տարօնեցու պատմութիւնն ըստ պատմագրական գրուածքների»: Ըստ ՆՀԲ-ի գրաբարում տառ նշանակել է նաեւ գիրք, մատեան (Հտ. II, էջ 847): Իսկապէս, ինչպէս առաջին հանդէսը, այնպէս էլ երկրորդը քաղագրութիւն են նախորդ դարաշրջանների պատմիչների գրուածքներից, հետեւաբար այդպէս պէտք է վերնագրուած լինէր նաեւ առաջին հանդէսը: Մասնաւորապէս ապացոյց է նաեւ երրորդ հանդէսը, որը հիմնականում ինքնուրոյն աշխատանք է, այդ պատճառով էլ այն A ձեռագրում վերնագրուած է՝ «Ստեփանոսի Տարաւնեցույ պատմութեան ժամանակաց, ինքնախաւսութիւն, երրորդ հանդէս»:

Օ ձեռագրում եւ առաջին տպագրութիւնում գրուած է «Ստեփանոսի Տարօնեցույ պատմութիւն ժամանակաց ինքնախաւսութեան, երրորդ հատոր»: Այսինքն՝ ձեռագրերում

1 Մ. Աբեղեան, Հայոց իմ գրականութեան պատմութիւն, հտ. 1, եր., 1944, էջ 507:

2 «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», Ալեքանդրապոլ, 1910, բուրձ ԾԵ:

չկայ «Պատմութիւն տիեզերական» վերնագիրը: Անհիմն է այն կարծիքը, ըստ որի իբրև թէ «Ասողիկն ինքն է իր Պատմութիւնը կոչել «Տիեզերական...»»¹:

ԺԱ դարի պատմիչ Արիստակէս Լաստիվերցին Ասողիկի եւ նրա գրքի մասին գրել է. «Ստեփաննոս Տարօնացին, որ զաշխարհապատում գիրան շարագրեաց սքանչելի յօրինուածովք»²: Ուշագրաւ է նաեւ, որ հետագայում Մ. Չամչեանն այն համարել է «Պատմութիւն Հայոց»³, ՆՀԲ-ն՝ «Պատմութիւն»⁴, Մ. Օրմանեանը՝ Պատմութիւն կամ ըստ Լաստիվերցու՝ Աշխարհապատում⁵, Կ. Շահնազարեանցը, ինչպէս երեւում է, չունենալով ձեռագրական հիմք, Ասողիկի գիրքն առաջին անգամ տպագրելով, այն վերնագրել է «Տիեզերական պատմութիւն»՝ հաւանաբար նկատի ունենալով Արիստակէս Լաստիվերցու «աշխարհապատում գիրք» բնորոշումը եւ Ասողիկի աշխատութեան դարեր տեւած պատմական իրադարձութիւնների ընդգրկուն բովանդակութիւնը⁶: Մ. Էմինը, նկատի ունենալով առաջին հրատարակութիւնը, Ասողիկի գիրքը վերնագրել է «Всеобщая история»⁷: Ստ. Մալխասեանցը հետեւել է Կ. Շահնազարեանցին՝ 2-րդ հրատարակութիւնը վերնագրելով «Տիեզերական պատմութիւն», չնայած իր կազմած բնագրի հիմք հանդիսացող С ձեռագրում բացակայում է այդպիսի բնորոշումը: Այնուամենայնիւ այս գրքի «Տիեզերական պատմութիւն» անուանումը գտել է լայն տարածում: Մեզ համար ընդունելի է ձեռագրերում եղած «Պատմութիւն ժամանակաց» անուանումը, բայց դժուար է խախտել տեւական ժամանակաշրջանում համընդհանուր ճանաչում գտած աւանդոյթը:

Ստեփաննոս Տարօնացին իր «Պատմութիւն»-ը բաժանել է երեք հանդէսների՝ նպատակ ունենալով շարադրել հայկական երեք թագաւորական իշխանութիւնների (Հայկազեան, Արշակունիներ եւ Բագրատունիներ) համառօտ պատմութիւնը՝ զուգահեռաբար ներկայացնելով Հայոց աշխարհին մօտակայ, նաեւ ինչ-որ չափով հեռաւոր երկրների եւ ժողովուրդների համառօտ պատմութիւնը՝ ըստ հայկական եւ օտարագրի գրաւոր աղբիւրների:

Բոլոր ձեռագրերում առաջին հանդէսի սկզբնամասը պակաս է. այն սկզբում եղել է, ինչը հաստատում է հեղինակը՝ գրելով. «Արդ սկիզբն արասցուք սկզբնականս, յորում նախահայրն մեր ել արտաքս ի դրախտէն...»⁸: Այդ նոյնն է հաստատում եւ ԺԱ դարի պատմիչ Արիստակէս Լաստիվերցին՝ Ասողիկի մասին գրելով. «Սկսեալ ի մարդն առաջին եւ գայ բովանդակէ զպատմութիւն իւր ի վախճան Գագկայ»⁹:

Առաջին հանդէսը բաղկացած է հինգ գլուխներից, որոնցում շարադրուած է աշխարհի արարչագործութիւնից սկսած մինչեւ Հայոց առաջին Արշակունիների ժամանակաշրջանն ընդգրկող համառօտ պատմութիւնը: Այս հանդէսում անդրադարձ կայ նաեւ Եգիպտոսի

1 «Հայ մշակոյթի նշանաւոր գործիչները» (V-XVIII դարեր), Եր., 1976, էջ 196:

2 «Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերցուոյ», Եր., 1963, էջ 26:

3 Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հտ. Բ., Վեներտիկ, 1785, էջ 877:

4 ՆՀԲ, հտ. Ա., էջ 9:

5 Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 1383:

6 Յայտնի է, որ մեզն պատմութիւն է գրել նաեւ Վարդան Արեւելցին: Մ. Էմինը, անշուշտ, Կ. Շահնազարեանցի հետեւութեամբ, 1861 թ. Մոսկուայում հրատարակել է Վարդան Արեւելցու (իմբը կոչել է Վարդան Բարձրաբերդցի) այդ գիրքը «Պատմութիւն տիեզերական» անուանումով, իսկ Ղ. Ալիշանը 1862 թ. Վեներտիկում այն հրատարակել է հնագոյն ձեռագրի հիման վրայ «Հաւաքուած պատմութեան» վերնագրով:

7 «Всеобщая история Степаноса Таронского Асохика по прозванию», Москва, 1864.

8 Ստեփաննոս Տարօնացի, էջ 7: Հմմտ. T2, էջ 295, ծմ. 10:

9 Արիստակէս Լաստիվերցի, էջ 26:

Պտղոմէոսեանների տիրապետութեան, երբայցի աշխարհիկ եւ հոգեւոր առաջնորդների, հռոմէական կայսրերի, պարթեւական թագաւորների վերաբերեալ:

Երկրորդ հանդէսի վեց գլուխներում համառօտակի շարադրուած է Հայոց պատմութիւնը Տրդատ III-ից սկսած մինչեւ Արշակունեաց հարստութեան անկումը (428 թ.) եւ Բագրատունիների հանդէս գալը: Այստեղ ներկայացուած են Գրիգոր Լուսաւորչից սկսած մինչեւ Սահակ Պարթեւը գահակալած Հայոց կաթողիկոսների համառօտ գործունէութիւնը, ինչպէս նաեւ «Սասանեան թագաւորների, արաբական խալիֆների ու բիւզանդական կայսրերի յաջորդական աղիւսակները՝ ժամանակագրութեամբ հանդերձ»¹:

Չնայած առաջին եւ երկրորդ հանդէսները քաղաքրութիւններ են նախորդ դարաշրջանների պատմիչների գրուածքներից, յատկապէս Մովսէս Խորենացու, Սեբէոսի եւ Ղեւոնդի աշխատութիւններից, սակայն դրանք ունեն աղբիւրագիտական կարեւոր նշանակութիւն, քանի որ Ասողիկն օգտուել է այս եւ այլ հեղինակների մեզ չհասած աւելի հին ձեռագրերից, իսկ դրանք հետագայ դարերի ընթացքում վերստին ընդօրինակուելիս ինչոր չափով խաթարուել են:

Այսպէս, օրինակ, Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի՝ մեզ հասած ամենանախնական գրչագիրը (ՄՄ, ձեռ. 2865, ԺԳ դ.) 1684 թուականին մէկ այլ ձեռագրի հիման վրայ զգալի չափով վերանորոգուել է գրիչ Դաւիթ Ճնճղուկի կողմից: Մ. Աբեղեանը հանգամանօրէն նշել է հին ձեռագրի եւ նոր կարկատանների ուղղագրական էական տարբերութիւնները: Սկզբնական օրինակը գրուած է հին ուղղագրութեամբ՝ աւ, եւ երկբարբառներ, օր, առեւծ, արեւն, նորը՝ օ, իւ, առիւծ, արիւն, բայերի անկատարը՝ հինը՝ եր, եիր, նորը՝ էր, էիր եւ այլն²:

Ստեփանոս Տարօնեցու «Պատմութիւն տիեզերական»-ի մեզ հասած ամենահին ձեռագիրը նոյն N 2865 գրչագիրն է, որտեղ Ասողիկի գիրքն ընդօրինակուել է ԺԳ դարում. այնտեղ Խորենացու գրքից կան համառօտ եւ ընդարձակ քաղաքրութիւններ: Հետեւաբար Խորենացու գրքի հին եւ նոր գրութիւնների եւ Ասողիկի գրքի համապատասխան հատուածների համեմատութեամբ հնարաւոր է կատարել բնագրային ճշգրտումներ: Այդպէս էլ ճշգրտումներ կարելի է կատարել Սեբէոսի (է դար) եւ Ղեւոնդի (Ը դար) գրքերում, փոխադարձաբար՝ նաեւ Ասողիկի աշխատութիւնում³:

«Պատմութիւն տիեզերական»-ի Գ. հանդէսը ե՛ւ ծաւալուն է, ե՛ւ արժէքաւոր, քանի որ այն իսկապէս ինքնախօսութիւն է, որտեղ քառասունութ գլուխներում հեղինակը շարադրել է Բագրատունեաց հայկական թագաւորութեան 117 տարիների պատմութիւնը՝ սկսած Աշոտ I-ից (885-890) մինչեւ 1004 թուականը, այսինքն՝ մինչեւ Գագիկ I-ի գահակալութեան 15-րդ տարուայ պատմութիւնը, ըստ որում վերջին 80 տարիների պատմութիւնը շարադրել է որպէս պատմական իրադարձութիւնների ժամանակակից եւ լաւատեղեակ հեղինակ: Երրորդ հանդէսում անդրադարձ կայ նաեւ արաբների եւ Բիւզանդիայի պատմութեանը:

1 Ստ. Մելիք-Բախշեան, Հայոց պատմութեան աղբիւրագիտութիւն, Եր., 1979, էջ 159:
 2 Հմմտ. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ ԻԱ:
 3 Սեբէոսի Պատմութեան ամենահին ձեռագիրը, որն ընդօրինակուել է ԺԶ դարում, այժմ կորած է, մեզ հասած ամենահին միւս ձեռագիրը (ՄՄ, N 2639) ընդօրինակուել է ԺԷ դարում՝ Բաղէշի Յովհանէս Մկրտչի Ամրոզու վանքում: Ղեւոնդի Պատմութեան հնագոյն ձեռագիրը (ՄՄ, N 1902) ԺԳ դարի ընդօրինակութիւն է: Բնական է, Ասողիկն օգտուել է Սեբէոսի եւ Ղեւոնդի գրքերի աւելի հին ձեռագրերից, հետեւաբար այստեղ եւս ծագում է համեմատութեան եւ նշգրտման անհրաժեշտութիւն:

Ասողիկը, լինելով ճանաչուած հոգեւորական գործիչ, սերտ շփումներ է ունեցել կաթողիկոսարանի եւ Բագրատունեաց արքունիքի հետ, հետեւաբար լաւատեղեակ էր կատարուած եւ կատարուող պատմական իրադարձութիւններին, ինչպէս նաեւ Հայաստանի ներքին կեանքին: Նա գրաւոր աղբիւրների միջոցով քաջատեղեակ է ոչ միայն հայոց, այլեւ յունաց, պարսից, եգիպտական, եբրայական, վրաց եւ Հայաստանի շրջակայ այլ պետութիւնների եւ ժողովուրդների պատմութեանը, իմացել է նաեւ օտար լեզուներ, լաւատեղեակ է եղել տոմարին եւ տոմարագիտութեանը, յաճախակի դիմել է Եւսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն»-ին, բազմիցս կատարել ժամանակագրական հաշուարկներ: Սակայն նա Պատմահայր Խորենացու նման չի գրել քննական պատմութիւն, նոյնիսկ տեղ-տեղ նոյն պատմական իրադարձութիւնը կրկին ներկայացրել է ըստ այլ աղբիւրների հաղորդած տարբերոյթ փաստերի:

Ստեփանոս Ասողիկը հայրենասէր պատմիչ է, կողմնակից է հայոց միացեալ թագաւորութեանն ու հայոց առաքելական եկեղեցուն, դէմ է քաղկեդոնութեանը եւ որոշակի պայքար է ծաւալել ընդդէմ երկբնակութեան: Հէնց այս նկատառումով էլ նա իր գրքի Գ. հանդէսի մէջ է ներառել Հայոց Խաչիկ Ա. կաթողիկոսի հրամանով ընդդէմ Սեբաստիայի քաղկեդոնիկ մետրապոլիտին գրուած ծաւալուն պատասխան «Թուղթը», որը կրօնափոխութեան խորաթափանցութեամբ եւ փաստարկումներով դաւանաբանական գրականութեան գլուխգործոցներից է:

Ստեփանոս Տարօնեցին իր գրքի վերջում «Բան վախճանի փառատրական ի սպառուած յիշատակարանիս» աւարտական խօսքում որոշակիօրէն նշել է իր «Պատմութեան» աւարտման ժամանակը՝ 1004 թուականը, սակայն կայ տեսակէտ, ըստ որի գիրքն աւարտուել է 1000 թուականին¹: Ասողիկն իր այս յիշատակարանում գրել է. «Ձոր քննեալ գտաք ի հանդիպման ամին յԱդամայ մինչեւ առ մեզ լինել ամբ ցմճք [6282] եւ ի խաչելութենէ կենարար չարչարանաց Տեանն՝ ամբ ջհք [972]: Իսկ ըստ Յունաց թուականին ի Փիլիպպոս կայսերէ՝ ամբ չծէ [757], եւ ըստ հայերէն չափոյ թուականիս մերոյ՝ ամբ նծք [453]»: Անգամ գրել է, որ այն յունաց կայսր Վասիլի թագաւորութեան երեսուներորդ տարին է, Մեծ Հայքի թագաւոր Գագիկի իշխելու տասնհինգերորդ տարին, իր գրքի պատուիրատու Տէր Սարգսի հայրապետութեան տասներեքերորդ տարին²:

Հեղինակի այս հաշուարկները ճիշտ են:

Պրոֆ. Ա. Գ. Աբրահամեանը քննել է այս հարցը՝ ելակէտ ունենալով այն, որ «Հռոմէական (այն է՝ յունական – Գ. Մ.) թուականը» մեր ներկայ թուականին վերածելու համար, եթէ Նաւասարդից առաջ է, անհրաժեշտ է աւելացնել 247, իսկ եթէ Նաւասարդից յետոյ է, պէտք է գումարել 248³: Յունաց Փիլիպպոս կայսրից անցել է 20 է [757] տարի, այսինքն՝ 757+247=1004 թ.: Հայոց ՆԾԳ [453]+551(Հայոց մեծ թուականութեան սկիզբը)=1004 թ.:

Այսպիսով, Ասողիկն իր Պատմութիւնն աւարտել է 1004 թուականին:

Երրորդ հանդէսի ԽԶ գլխի վերջում կայ մի տարբերութիւն, որը տարակուսելի է. «Եւ ապա Գուրգէն վախճանի ի նծք [452] թուականին եւ Սենեքերիմ ունի զաթոռ թագաւորութեանն ամս ի [20]»⁴: Ինչպէս ականյայտ է, այստեղ ի (20) տարուայ նշումն աղաւաղում է, քանի որ Վասպուրականում Գուրգէնը եւ Սենեքերիմը թագաւորել են միասին մինչեւ հայոց 452 [1003] թուականը, Գուրգէնի վախճանուելուց յետոյ Սենեքերիմը դարձեալ թագաւորել է 20 տարի, ուրեմն մինչեւ 1023 թուա-

1 Մ. Զամչեան, Պատմութիւն Հայոց, հտ. Բ, էջ 877:

2 Ստեփանոս Տարօնեցի, էջ 285:

3 Ա. Գ. Աբրահամեան, Հայոց գիր եւ գրչութիւն, Եր., 1973, էջ 128:

4 Ստեփանոս Տարօնեցի, էջ 281:

կանը, մինչդեռ Ասողիկն իր գիրքն աւարտել է **1004 թուականին**: Հետեւաբար, ըստ Ստ. Մալխասեանցի՝ այստեղ պէտք է լինի **ամ մի**, որը սխալմամբ դարձուել է **ամս** **ի**¹:

* * *

Ասողիկի աշխատութիւնը հանրայայտ է եղել դարեր շարունակ եւ յաճախ ընդօրինակուել է: Ստեփանոս Տարօնեցուն եւ նրա գիրքը յիշատակել են Արիստակէս Լաստիվերցին (ԺԱ դ.), Սամուէլ Անեցին (ԺԲ դ.), Մխիթար Այրիվանեցին (ԺԲ դ.), Մխիթար Անեցին (ԺԳ դ.), Կիրակոս Գանձակեցին (ԺԳ դ.), Վարդան Արեւելցին (ԺԳ դ.), Առաքել Դաւրիժեցին (ԺԷ դ.) եւ ուրիշներ:

Այսպիսով՝ կարգաւորվ «Տիեզերական պատմութիւն»-ն ընթերցողը եզրահանգում է, որ դարերի թոհուրէր հում ինչպիսի՝ մահաշունչ փոթորիկներ են անցել Հայոց աշխարհով, սակայն հայ ժողովուրդը շարունակել է գոյատեւել եւ վերակառուցել կործանուած գիւղերն ու քաղաքները, ստեղծել հոգեւոր եւ մշակոյթի այլեւայլ կենտրոններ:

Ասողիկի գիրքը հայ ժողովրդին հաղորդել է յաւերժելու ուժ եւ կենսունակութիւն: Այս աշխատութիւնը, իսկապէս, անցած դարերի **հայոց մաքառման գրականութեան կոթողներից է**:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ստեփանոս Տարօնեցու «Պատմութիւն տիեզերական» աշխատութիւնն առաջին անգամ լոյս է տեսել 1859 թուականին Փարիզում Ս.Էջմիածնի միաբան, բանիբուն եւ բազմադրիւն վարդապետ Կարապետ Շահնազարեանցի կողմից երկու ձեռագրերի համեմատութեամբ: Մի ձեռագիրը, ըստ Կ. Շահնազարեանցի, ընդօրինակուել է Բաղէչի Ս. Յովհաննու Մկրտչի Ամլորդու վանքի գրատանը, իսկ միւսը 1843 թուականին ինքն է ընդօրինակել Սիւնեաց նահանգի Տաթեւի մայրավանքի մի ձեռագրից իր հոգեւոր տեսչութեան ժամանակ:

Ըստ Կ. Շահնազարեանցի՝ այդ երկու ձեռագրերի բնագրային տարբերութիւնները չնչին են եղել. «Աղբիւր երկոցունցն մի գուրով՝ տարբերութիւնքն չնչին իմն էին. այլ դժբախտաբար յերկոսին եւս պակասէր մասն ինչ երրորդ գլխոյ երկրորդ գրոցն» (էջ 11): Կ. Շահնազարեանցը նամակով խնդրել է Մխիթարեան հայրերին՝ լրացնելու պակասը: Պատասխանել են, որ իրենց օրինակում եւս այն պակաս է: Յաւելենք, որ Ասողիկի մեզ յայտնի բոլոր ձեռագրերում այդ հատուածը պակաս է: *AB* ձեռագրերը պակասը չեն նշել եւ տեղ չեն թողել, իսկ *ODE* ձեռագրերը ոչ միայն նշել են, որ այդտեղ պակաս կայ, այլեւ տողեր, անգամ էջեր են ազատ թողել: *O* ձեռագրի գրիչը գրել է. «Բ թողթ ի յօրինակ պակասէ. անմիտ գրիչս չի մեղադրէք» (էջ 380): *D* ձեռագրում (էջ 93ա) նշուած է. «ի յաւրինակն թ էջ թողած» (էջ 380):

Կան ապացոյցներ, որ Վենետիկի N 869 ձեռագիրը Կ. Շահնազարեանցի համեմատած միւս ձեռագիրը չէ: Երկրորդ տպագրութիւնը, որը հատուածաբար լրացուած է երեք այլ ձեռագրերից, եւ N 869 ձեռագիրը հիմնականում համընկնում են բնագրի ամբողջականութեամբ (օրինակ՝ *T*₂, էջեր 132-135, 135-145, *O* ձեռագիր, էջ 395, 396-404). երկուսում էլ կան երկրորդ հանդէսի Ե, Զ գլուխները, իսկ *T*₁-ը այս մասերում պակասաւոր է, այնտեղ չկան նաեւ նշուած Ե, Զ գլուխները:

1 Ստեփանոս Տարօնեցի, էջ 393-394, ծճ. 146:

Վենետիկի N 896 ձեռագիրը, չնայած իր առկայ թերութիւններին, Ասողիկի «Պատմութիւն տիեզերական»-ի լաւագոյն գրչագրերից է: Այն 1683-1684 թուականներին ընդօրինակուել է Բաղէշում: Նոտրդիր այդ ձեռագրի գրիչը Դաւիթ ձնճղուկն է: Այն մեր համեմատած O ձեռագիրն է:

Կ. Շահնագարեանցի համեմատած երկու ձեռագրերից մէկի վերաբերեալ Ստ. Մալխասեանցը գրել է, որ եթէ ինքը չի սխալուում, այն գտնուում է Սարգիս վարդապետ Տէր-Պասապարեանցի մօտ, գրուած է մագաղաթի վրայ մանր երկաթագրով, երեւելի հնութեամբ, բայց ոչ լրութեամբ եւ ընտիր ընթերցուածներով¹: Այդ գրչագրի մասին գրել են նաեւ Ն. Մառը², Մ. Աբեղեանը³ եւ ուրիշներ:

Ըստ Մ. Աբեղեանի՝ այն ընդօրինակուել է Լօռու Աւգորի գիւղում, Սանահին ուխտում. ստացող՝ «Սարգիս արհեստիւկոպոս Սանահնեցի»: Այժմ այդ ձեռագիրը պահուում է Մաշտոցի անուան Մատենադարանում, N 3160: Եւ քանի որ «Պատմութիւն տիեզերական»-ի նոր բնագրի համար համեմատուած ձեռագրերից մէկն է (ըստ մեր համեմատութեան՝ ձեռ. B), ըստ «Ցուցակ ձեռագրաց»-ի ներկայացնենք այն. «1633-1652⁰ թթ.: Աւգաւր գիւղ (Լօռի): Գրիչ՝ Ներսէս, ստացող՝ Սարգիս Սանահնեցի: Թերթ՝ 289: Մագաղաթ: 22×16: Երկսիւն: Բոլորգիր, տող՝ 27: Կազմ՝ կաշեպատ գրոշմագարդ տախտակ, բովանդակութիւնը՝ «Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Աշխարհացոյց, Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն ժամանակաց (էջ 133-221բ), Արիստակէս Լաստիվերցի, Վասն անցից անցելոց»: Ըստ մեր հետազօտութեան՝ այս ձեռագիրն ընդօրինակուել է ոչ թէ 1633-1652 թթ., այլ 1646-1681 թուականներին⁴: Անհրաժեշտ է շեշտել, որ այս ընդօրինակութիւնը սխալաշատ է, սակայն կան նաեւ բնագիրը ճշգրտող ընթերցումներ:

Անշուշտ, հեշտ չէ ոչ ամբողջական ձեռագրերի հիման վրայ եւ այն էլ առաջին անգամ որեւէ պատմիչի որեւէ աշխատութեան բնագրի կազմումը, քանի որ առաջանում են բազում դժուարութիւններ՝ բառանջատում, նախադասութիւնների եւ բառակապակցութիւնների տարանջատում, հասարակ եւ յատուկ անունների որոշում, Հայոց այբուբենի տառերով նշուած թուականների տարբերակում, տառերի, բառերի շփոթութեան ճշգրտում, ճիշտ կէտադրում: Անհրաժեշտ են պատմական եւ այլ երեւոյթների իմացութիւն, ձեռագրերը ճիշտ ընթերցելու եւ բազում այլ բարդութիւններ յաղթահարելու կարողութիւն: Ի պատիւ Կ. Շահնագարեանցի պէտք է արդարամտօրէն ասել, որ նա շատ դժուարութիւններ կարողացել է յաղթահարել, իհարկէ, շատ հարցեր էլ մնացել են անլուծելի:

Ստեփանոս Տարօնեցու գրքի առաջին տպագրութիւնն արդէն գրուել էր գիտական շրջանառութեան մէջ, նրա հիման վրայ կատարուել էին ռուսերէն, ֆրանսերէն թարգմանութիւններ, սակայն զգացուում էր այդ աշխատութեան գիտական լիարժէք հրատարակութեան հրատապ պահանջ:

Բանասէր եւ պատմաբան Կ. Հ. Եղեանցի (1835-1905) խորհրդով այդ կարեւոր գործը ձեռնարկեց Ստեփանոս Մալխասեանցը (1857-1947): Աշխատասիրողի ձեռքի տակ կար, ճիշտ է, բաւականին լաւ, բայց միայն մէկ ձեռագիր՝ ընդօրինակուած 1668 թուականին, որն իր գրադարանից Մալխասեանցին է տրամադրուում Կ. Եղեանցը: Այժմ այդ ձեռագիրը պահուում է Մաշտոցի անուան Մատենադարանում՝ N 4864, ըստ մեր համեմատութեան՝ ձեռ. C:

Առաջին տպագրի պակաս հատուածները Ստ. Մալխասեանցը լրացրել է երեք ձեռագրերից՝ Այլ ձեռագիր (այժմ Մաշտոցի անուան Մատենադարանի N 2865 ձեռագիրը), Բրոսէի ձեռագիրը (այժմ

1 Ստեփանոս Տարօնեցի, էջ ԼԲ:

2 **Н. Март**, Из летней поездки в Армению. Записки восточного отделения, т. VI, вып. I-VI, 1892, ст. 179. Նոյնը կրճատումներով քարգմանուել է հայերէն՝ «Ամառնային ուղեւորութիւնից դէպ ի Հայս», Վիեննա, 1892, էջ 85-90:

3 **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, էջ ԺԹ:

4 **Գ. Մանուկեան**, Արիստակէս Լաստիվերցի, Երեւան, 1977, էջ 243-244:

Ս.Պետերբուրգի N B-129 գրչագիրը) եւ Վենետիկի մի ձեռագիր: Նկատի է ունեցել նաեւ Ասողիկի գրքի՝ Մ. Էմինի ուսուերէն թարգմանութեան հայերէն երեք յաւելուածները. գրանք են՝ երկրորդ հանդէսի չորրորդ գլխի վերջը, նոյն գրքի հինգերորդ եւ վեցերորդ գլուխները, որոնք եւս Մ. Էմինը թարգմանել է ուսուերէն (էջ 329-335):

Սակայն Մալխասեանցի ձեռքի տակ չեն եղել ոչ միայն ամբողջական այլ ձեռագրեր, այլեւ Ասողիկի գրքի նախահիմք եւ հնագոյն (XIII դ.) գրչագիրը: Այժմ այն պահուում է Մաշտոցի անուան Մատենադարանում (N 2865), ըստ մեր համեմատութեան՝ ձեռ. A:

Ստ. Մալխասեանցի խնդրանքով Կիւրեղ վարդապետ Սրապեանն այլ ձեռագրից ընդօրինակել եւ նրան է ուղարկել առաջին տպագրութիւնում պակասող երկրորդ հանդէսի Դ, Ե եւ Զ գլուխները:

Նոր բնագիր կազմելիս ի՞նչ սկզբունքներով է առաջնորդուել Ստ. Մալխասեանցը:

Առաջին հերթին նա ձգտել է վերականգնել Ասողիկի գրքի առաջին տպագրութեան պակասող մասերը, իսկ եթէ կան տարբերութեամբներ, ընտրութիւն կատարելիս նկատի է ունեցել «Պատմութեան» յօրինման ժամանակաշրջանը, ինչպէս նաեւ հեղինակի լեզուի եւ ոճի ընդհանուր յատկանիշները, որոչ ղէպքերում ինքն է լրացրել: Եւ քանի որ նրա համեմատած բուն ձեռագիրը Ժէ դարի (1668 թ.) ընդօրինակութիւն է, այնտեղ զանազան եւ կրկնուող գրչագրական միջամտութիւններ լինելիս Մալխասեանցն իր կազմած բնագրում առաջնութիւնը տուել է ոչ թէ հնագոյն եւ նախնական ընթերցումներին, այլ, ինչպէս ինքն է ասում, կրկնուող եւ նորագոյն ձեւերին:

Առաջին, երկրորդ հանդէսները եւ երրորդ հանդէսի սկզբնամասը կազմելիս հաշուի է առել նաեւ նախորդ պատմիչների այն գրուածքները, որոնք ընդօրինակել է Ասողիկը: Եւ քանի որ տարբեր պատմիչների գրուածքներում կան միմեանցից տարբեր ընթերցումներ, Մալխասեանցն իր կազմած բնագրի զանազան էջերում թողել է նոյն անուան, միեւնոյն տեղի՝ յատկապէս ուղղագրական տարբեր ընթերցումներ: Իսկ ինքնուրոյն գրած երրորդ հանդէսի բնագիրը կազմելիս հիմք է ընդունել առաջին տպագրի ընթերցումները, իսկ որոչ տեղերում էլ ինքն է յաւելումներ կատարել՝ դրանք վերցնելով անկիւնաւոր փակագծերի մէջ: Ստ. Մալխասեանցն իր կազմած բնագրի տարբերութեամբները ներկայացրել է տողատակերում, իսկ առանձին աղաւաղուած կամ դժուարընկալելի հատուածներ, անձնանուններ, էթնիկական անուններ, տեղանուններ, թուականներ, թարգմանութիւններ բազմակողմանիօրէն ծանօթագրել է 148 ուշագրաւ ծանօթագրութիւններում: Կազմել է հայոց, հարեւան եւ նոյնիսկ հեռաւոր ժողովուրդներին եւ թագաւորութիւններին վերաբերող ժամանակագրական ցանկեր, ներկայացրել ըստ Խորենացու եւ ըստ Ասողիկի 303-1004 թուականների հայոց կաթողիկոսների գաւազանացանկը: Մալխասեանցի կազմած այս ծանօթագրութիւններն չափազանց արժէքաւոր են:

Առանց վարանելու կարելի է ասել՝ Մալխասեանցը կատարել է դասական բանասիրութեանը բնորոշ մեծածաւալ աշխատանք: Վրիպումները, թերացումները հիմնականում բնագիրը կազմելիս ԺԳ դարի հիմք ձեռագիրը եւ այլ ձեռագրեր չընդգրկելու հետեւանք են:

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՍՈՂԻԿԻ ԵՐԿԻ ԼԵԶՈՒՆ, ՈՃԸ ԵՒ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Թ-Ժ դարերն առանձնապատուկ են հայ ժողովրդի կեանքում: Այդ Բագրատունեաց թագաւորութեան հիմնադրման (885) եւ առաջընթացի ժամանակաշրջանն է: Ինքնուրոյն պետականութեան հաստատմամբ մեծ աշխուժութիւն է ապրում նաեւ հայոց մշակոյթը, այդ թւում՝ նաեւ պատմագրութիւնը:

Թ-Ժ դարերում վերականգնում են Ե դարի մեր Հարուստ պատմագրութեան աւանդները: Առանձնապէս հզօր է Պատմահայր Մովսէս Խորենացու եւ գեղագէտ պատմիչ Եղիշէի գրուածքների բարերար ազդեցութիւնը նաեւ լեզուի ու ոճի առումով: Այդ դարերի մատենագիրներ Մովսէս Կաղանկատուացին, Թովմա Արծրունին եւ Անանունը, Յովհաննէս Դրասխանակերտցին եւ Ստեփանոս Ասողիկը ոչ միայն հետեւում են անցեալի աւանդներին, այլեւ իրենց ինքնուրոյն խօսքն են ասում, որը եւ ընդօրինակում է հետագայ դարերի մատենագիրների կողմից:

Փոթորկուն, ինքնահաստատման այդ պատմաշրջանում բաւականին բարդ էր գրաբարի վիճակը: Նշանաւոր հեղինակները, ստացած լինելով վանական կրթութիւն, գրաբարով ստեղծում են գրական գլուխգործոցներ: Սակայն, կենդանի խօսքն աստիճանաբար հեռանում է դասական հայերէնից, եւ այդ իր ազդեցութիւնը չէր կարող չունենալ յատկապէս պատմագրութեան լեզուի ու ոճի վրայ: Ահա թէ ինչու ի յայտ են գալիս եւ ձեւաւորում ոճական մի քանի ուղղութիւններ՝ ճարտասանական կամ հռետորական ոճը, որի նշանաւոր ներկայացուցիչը Ժ դարի ականաւոր հոգեւոր գործիչ եւ պատմիչ Յովհաննէս Դրասխանակերտցին է, եւ «գեղջուկ բանը», որի սկզբնավորողը Շապուհ Բագրատունին է: Նրա երկը, ցաւօք, կորել է, միայն տեղեկութիւններ են մնացել այլ հեղինակների գրուածքներում:

Բանաստեղծական արուեստում ճարտասանական ոճի կարկառուն ներկայացուցիչը, անշուշտ, Ժ դարի հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին է:

Կայ նաեւ ոճական մէկ այլ ուղղութիւն, որը հարում է ճարտասանական ոճին, դա, այսպէս ասած, խրթին կամ գաղտնածածուկ ոճն է¹: Ոճային այդ ուղղութիւնն իր բարձրակէտին է հասել Ժ-ԺԱ դարերի պետական հանրայայտ գործիչ, մատենագիր, բանաստեղծ, թարգմանիչ, փիլիսոփայ Գրիգոր Մագիստրոսի թղթերում:

Քննուող ժամանակաշրջանի պատմագրութեան լեզուի եւ ոճի մասին առաւել ամբողջական պատկերացում կազմելու համար, մասնաւորապէս, մի քանի խօսքով բնութագրենք Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի «Պատմութիւն տիեզերական» երկի լեզուաոճական առանձնայատկութիւնները:

Ասողիկը, լինելով եկեղեցական նշանաւոր գործիչ, ոչ միայն քաջածանօթ էր մեր պատմագրութեանը, այլեւ լաւատեղեակ էր գրաբարի անցած ամբողջ ուղուն: Նրա վրայ առանձնապէս մեծ ազդեցութիւն է թողել Մովսէս Խորենացին, որի «Պատմութիւն Հայոց»-ից բանաբաղութիւն է կատարել՝ շարադրելով իր «Տիեզերական պատմութեան» առաջին, երկրորդ հանդէսները եւ երրորդ հանդէսի սկզբնամասը: Նա ձգտել է ոչ թէ ճառօրէն շարադրել, այսինքն՝ ծաւալել պատմական իրադարձութիւնների նկարագրութիւնները եւ գրանք ներկայացնել գեղարուեստական շնչով, այլ ներկայացնել փաստերը: Ինքն է խոստովանում՝ ասելով, որ ոչ թէ «ճառից են ժամանակ, այլ դոյզն յիշատակարանաց»²: Պէտք է նկատի ունենալ, որ այս շրջանում սկսում է ձեւաւորուել նաեւ մեր պատմագրութեան մէկ այլ ուղղութիւն՝ ժամանակագրութիւնը, որի համար էականը փաստերի վերհանումն էր, ոչ թէ փաստերը գեղարուեստական ոճաւորումով շարադրելը: Ասողիկի երկը գտնւում է պատմագրութեան եւ ժամանակագրութեան խաչմերուկում: Ժամանակագրութեան ուղղութիւնն առանձնապէս զգացում է այն հատուածներում, որոնք ան-

1 Մ. Արեղեան, Երկեր, հտ. Գ, Երևան, 1968, էջ 613-615:

2 Ստեփանոս Տարոնեցի, էջ 275:

ցեալի հեղինակներին, յատկապէս Մովսէս Խորենացու երկից բանաքաղութիւններ են: Սակայն, ինչպէս Ժ-ԺԱ դարերի միւս պատմիչները, այնպէս էլ Ասողիկը ժամանակագիրներ չեն. նրանք դեռեւս հաւատարմօրէն հետեւել են դարերի ընթացքում սրբագործուած պատմագեղարուեստական արձակի աւանդներին: Պարզապէս նրանց երկերում ետ է մղւում գեղարուեստական խօսքը, առաջնային է դառնում փաստական նիւթի հաղորդումը: Այս հիմքի վրայ էլ առաջանում ու զարգանում է միջնադարեան ժամանակագրութիւնը, սակայն պատմագրութիւնը չի կորցնում իր դերն ու կշիռը: Իսկ այս ամենը լեզուի եւ ոճի առումով ստանում է իր ուղղակի դրսեւորումը:

Բաւականին հարուստ եւ բազմաբնոյթ է «Պատմութիւն տիեզերական» երկի բառապաշարը: Այնտեղ կայ մօտաւորապէս 6208 բառարանային բառաքանակ, որը գործածուել է մօտաւորապէս 49.165 անգամ, շուրջ 12,62 % յաճախականութեամբ¹:

Սրանք Ժ-ԺԱ դարերում Յովհաննէս Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց»-ից յետոյ երկրորդ ցուցանիշներն են՝ գերազանցելով Մովսէս Կաղանկատուացու, Թովմա եւ Անանուն Արծրունիների գրուածքների բառապաշարը՝ առանձին վերցրած:

Ասողիկի գրքի բառապաշարը ՆՀԲ-ում բազմիցս վկայուած է այլ հեղինակների գրուածքների բառամթերքի հետ, սակայն կան գլխաբառեր, որոնք բառարանում վկայուած են միայն Ասողիկի գրքի բնագրով, իսկ այս նշանակում է, որ այդ բառերը կա՛մ հեղինակային նորակազմութիւններ են, կա՛մ դրանք մեզ հասած գրաւոր խօսքում առաջին անգամ գործածել է ինքը՝ հեղինակը, որն էլ ապացուցում է, որ նա մեր միւս նշանաւոր մատենագիրների պէս լեզուաշինարար է:

Այդ բառերն են՝ ամահամար, ամբարանոց, ամիրացուցանել, այրացել (այրացեալ), անգանազանապէս, անմարդացուցանել, առաւօտել, յառաւօտանալ, առեղծուած (=պարզապէս եղծումն եւ դիւրեղծական ինչ նշանակութեամբ), աստուածարելաբար (=իբրեւ Աստուած համարելով), արդարահայց, արձականիստ (=ընդարձակ), աւելածայնութիւն, բով, հրազէն (նշանն Տէրունական, ըստ Մ Էմինի՝ հրաշագէն): Ըստ ՆՀԲ-ի (Հտ. Բ, էջ 129) հրով սպառազինեալ, որպէս գէն կամ սուր բոցեղէն), բազմաբոյժ, զազրագործել (ՆՀԲ-ում՝ չի՛ք, Առձեռն, Բ տպ., էջ 285):

Ժժան, կամ՝ ժրժան, հակաճառ (=հակաճառող, ընդդիմախօս), հանապազմաեռիկ, հանդարտագնաց (Մ. Խոր.՝ հանդարտ գնացիւք), հետեւակազունդ (=գօրատեսակ), հիւպատուորութիւն (=հիւպատոսական աստիճան), (հմմտ. Հր. Աճառեան, Արմատական բառարան, Հտ. IV, էջ 322), հնգազլխեան գրովք (ըստ հնգազլխեան գրոց Մովսիսի), հովտային (Մ. Խոր., Թ. Արծր.՝ հովտաձեւ), մայրաբուսակ (=ուր բուսեալ իցեն մայր ծառք, ՆՀԲ, Հտ. Բ, էջ 26): (Ասողիկը գրել է՝ ի մայրաբուսակ լերինն Մեծրաց), մայրագերան, մեծաշնորհ, միայարեմ (=ի մի յարել, շարակարգել, շարագրել), ներդիմեալ (Զեռ. Ա, էջ 218բ, իսկ T, էջ 224, ծն 5 – ներգիմեալ), շնմոլութիւն, պաշտօնապայծառ (=պայծառ ի պաշտաման, որ փառաւոր առնէ զպաշտօնն), պէս գունակ, (պէսգունակ, Հր. Աճառ., Արմատական բառարան, Հտ. IV, էջ 78), վեհագունեան, փորածոյ (=փորեալ, փորելով գործեալ, վիմափոր), քաջաբարոզ (=լաւ քարոզող) եւ այլն:

1 Ասողիկի գրքի Համարարբարի 3-րդ մասը ցայօր չի տպագրուել, անյայտ է անգամ, թէ որտեղ է ձեռագիրը, դրա համար էլ մօտաւորապէս եմք հաշուարկել «Տիեզերական պատմութեան» բառապաշարը՝ համեմատութեան համար նկատի առնելով Ա եւ Բ հանդէսների ծաւալը եւ բառաքանակը:

Ասողիկի գրքում կան մի քանի բառեր, որոնք բացակայում են Նոր Հայկազեան եւ Առձեռն բառարաններում:

Այդպիսիք են՝

1) անկերպանալ (անկերպացալ), ՆՀԲ-ն ունի կերպանամ (հտ. I, էջ 1082), սակայն ժխտականը չի վկայուած:

2) արհեստաւոր (բազում ջան եղեւ արհեստաւոր ճարտարացն Յունաց առ ի վերստին նորոգել, էջ 251):

3) գեր ի վերոյ. ՆՀԲ-ում կայ վեր ի վերոյ՝ արտաքնապէս նշանակութեամբ, սակայն գեր ի վերոյ կապակցութիւնը վկայուած չէ:

4) ապուհիւպատ:

5) հիւպատաւորութիւն, (զհիւպատաւորութեան պատիւն, այսինքն՝ ապուհիւպատ պատիւն, Ասողիկ, T₂, էջ 144): Հ. Աճառեանը տեղեկացնում է, որ ՆՀԲ-ն չունի հիւպատաւորութիւն բառը (Արմատ. բառարան, հտ. Դ, էջ 322): Բառս ունի «Առձեռն բառարան»-ը հիւպատոսութիւն բացատրութեամբ, էջ 497: Երկու բառարաններում չկայ ապուհիւպատ բառը:

6) ներգիմեալ (Հմմտ. Ձեռ. A, էջ 218բ): Ձեռ. C-ի (T₂-ի հիմք ձեռագիրը) ներգիմեալ (T₂, էջ 225). վրիպակ է՝ դ>գ:

7) նոյնահետ (Ձեռ. A, էջ 240ա – նոյնհետ):

8) Չկաթողիկոս (T₂, էջ 102):

9) Քակեդոնիկ (T₂, էջ 102) եւ այլն:

ԱՍՈՂԻԿԻ ԲՆԱԳՐԻՆ՝ ՆՈՐԱՅՐ ԲԻԻԶԱՆԴԱՅՈՒ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐԸ

Ասողիկի երկում բնագրային ուղղումներ կատարել են այլեւայլ ուսումնասիրողներ, բայց առանձնապէս արժէքաւոր են Նորայր Բիւզանդացու (1844-1916) «Նախնիք» աշխատութիւնում առաջարկած՝ Ասողիկի գրքին վերաբերող բնագրային աւելի քան 80 ուղղումները¹:

Բազմավաստակ հայագէտն իր «Հայկական բառաքնութիւն»² եւ «Նախնիք» աշխատութիւններում ստեղծել է գրաբար բնագրերը ճշգրտելու ուրոյն համակարգ, որը դեռեւս 1890 թուականին ներկայացրել է Հռոմի Արքայական ակադեմիային³:

Ասողիկի գրքում Ն. Բիւզանդացու գրեթէ բոլոր ճշգրտումներն ընդգրկուած են բուն բնագրում՝ տարընթերցումների բաժնում ՆԲ.Ն. համառօտագրութեամբ:

Որպէսզի պարզ դառնայ, թէ որքան արժէքաւոր են Ն. Բիւզանդացու՝ յաճախ չափազանց սրամիտ արուած ճշգրտումները, դրանցից մի քանիսը ներկայացնենք այստեղ.

1) Առաջի փխ. առաքի, էջ 141:

Ձեռագրերում եւ տպագիրներում աղաւաղուած է թեւաւոր այն խօսքը, ըստ որի Բիւզանդիայի հայագգի կայսր Մորիկի մասին ասուած է. «Աստի յՕշական խունկ առաջի»: Ն. Բիւզանդացին ուղղել է. «Աստի յՕշական խունկ առաքի» (Այստեղից Օշական խունկ

1 Նորայր Ն. Բիւզանդացի, Նախնիք, հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, ժնեւ, 1996:

2 Ն. Բիւզանդացի, Հայկական բառաքնութիւն, ուղղութիւնի ընթերցումն ու մատենագրութեանց նախնեաց եւ նշանակութեան բառից ինչ, Կ. Պոլիս, 1880:

3 Մանրամասները տե՛ս Գ. Մանուկեան, Հայ նշանաւոր բանասէրի մի անտիպ աշխատութիւնը, «Գրական թերթ», 1969, օգոստոսի 22:

է առաքում), որով ակնարկուում է նրա Օչականցի լինելը: Առանց այս ուղղման թեւաւոր խօսքը մնում է անհասկանալի:

2) Շփոթուել են՝ Տայք փխ. Հայք (էջ 267), լուծումն փխ. լուցումն (էջ 195), պիտանի փխ. պատանի (էջ 47), պատուոյ փխ. պատառոյ (էջ 115): Ընդունելով պատերազմից բերուած աւարը՝ թագաւորը դժգոհ ասում է. «Ընթրիքն առաւել մեծագոյն, եւ նշանն ի պատառոյս ծանեաց» (էջ 115), Առանց ուղղման ասուածի իմաստը չի ընկալուի:

3) Վարդան փխ. Վահան (էջ 125):

Խօսքը Վահան Գողթնացու մասին է. մինչդեռ բնագրում Վարդան Գողթնացի չի եղել. այն շփոթահար ուսումնասիրողներին ստիպել է տարբերակներ որոնել:

4) Եգիպտացիք փխ. Եգերացիք (էջ 163):

5) Մեծբաց լեառն փխ. Մեծրաց լեառն (էջ 279):

6) Լսարան փխ. լուսարան (էջ 177):

7) Սըրման փխ. Կըրման (էջ 89):

8) Ժառանգ որդի փխ. Ժառանգորդի (էջ 67):

9) Ոսկէ փուռնջ փխ. ոսկեփուռ (էջ 107):

10) Ընդ Հալպի դաշտն փխ. Ընդ Հալպ ի դաշտն (էջ 274):

11) Թագաւորեցուցանէին փխ. Թագաւորացն էին (էջ 616):

12) Թէպէտ փխ. Թէ դէպ (էջ 44):

13) Նորայր Բիւզանդացին ճշգրտել է Սեբէոսի գրքի բնագրում եղած չփաքարն աղաւաղուած «բառը», որը զչփաքարն աղաւաղուած ձեւով փոխանցուել է Ասողիկի երկին (էջ 96):

Առանձնապէս շատ աղաւաղումներ կան Խաչիկ Ա կաթողիկոսի՝ Սեբաստիայի մետրապոլիտին ուղղուած պատասխան թղթում: Այսպէս, օրինակ, թղթի վերջում կայ բնագրային մի խաթարում, որը փոխում է ամբողջ շարադրանքի իմաստը:

Որպէս պատասխան «Թղթի» աւարտ եւ եզրահանգում Խաչիկ կաթողիկոսը գրում է մետրապոլիտին. «Արդ դու խոստովանեսցի՞ս մի եւ անբաժանելի բնութիւնն զեկեալն եւ զգալոցն յանուն Տեառն, եւ զերծեսցի՞ս ի բաժանմանէ բաժանողաց սրոյն եւ յառաջահետեւող հրոյն...» (էջ 243): Մալխասեանցի կազմած բնագրում «բաժանողաց սրոյն»-ը դարձուած է բաժանողաց սրբոյն, որն անբնական է եւ հիմնովին սխալ: ABCODE ձեռագրերում եւ առաջին տպագրութիւնում (էջ 235) գրուած է սրոյն, որը ճիշտ է, քանի որ բաժանողը սուրն ու հուրն են, ոչ թէ սուրբը: Այն Մալխասեանցի կազմած բնագրում, անշուշտ, վրիպակ է, այլապէս տողատակում կնշուէր T-ի ճիշտ ընթերցումը:

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՕՆԵՑԻ ԱՍՈՂԻԿԻ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ»-Ի ԶԵՌԱԳՐԵՐԸ

Ստեփանոս Տարօնցի Ասողիկի «Պատմութիւն տիեզերական» (ձեռագրերում՝ «Պատմութիւն ժամանակաց») աշխատութիւնը դարեր ընդգրկող պատմական փաստերի իր համահաւաք բովանդակութեամբ մշտապէս փնտրուել է հայոց մատենագրութիւնում եւ յաճախակի ընդօրինակուել: Միայն Մաշտոցի անուան Մատենադարանում այժմ կան այդ աշխատութեան տասնմէկ ձեռագրեր: Ասողիկի Պատմութեան ձեռագրեր կան նաեւ Վենետիկում, Վիեննայում, Ս. Պետերբուրգում:

Առաջին անգամ մի քանի ձեռագրերի համեմատութեամբ «Պատմութիւն տիեզերական»-ի քննական բնագիրը կազմելու համար հիմնականում ընտրել ենք ՄՄ N 2865 (XIII դ.), N 3502 (1663 թ.), N 4584 (1668 թ.) եւ Վենետիկի N 869 (1683-1684 թթ.) ձեռագրերը՝ հաշուի առնելով նրանց աւելի վաղ ընդօրինակման ժամանակային գործօնը: Իհարկէ, կարեւորուել է նաեւ նրանց բովանդակային լիարժէքութիւնը: Համեմատաբար ամբողջական են եւ ունեն նախընտրելի ընթերցումներ յատկապէս AGO գրչագրերը: Չնայած C ձեռագիրը Բ տպագրութեան հիմքն է եղել, մենք այն եւս համեմատեցինք, քանի որ Ստ. Մալխասեանցը բնագիրը կազմել է առաջին տպագրի եւ յատկապէս այս միակ ձեռագրի համեմատութեամբ: Իսկ երբ վերջնականապէս ճշգրտուում են C ձեռագրի ընթերցումները միւս ձեռագրերի համեմատութեամբ, աւելի վստահ է կազմուում բուն բնագիրը, նաեւ պարզ են դառնում այդ ձեռագրի տարբեր ընթերցումների հիմքերը:

Նախապէս քննուել է ձեռագրերի ընդօրինակման ժամանակի հարցը, այս առումով կատարուել են որոշ ճշգրտումներ:

Այսպէս, պարզել ենք, որ N 2865 ձեռագիրը ոչ թէ ԺԴ-ԺԵ դարերի ընդօրինակութիւն է, այլ ընդօրինակուել է ԺԳ դարում: Այս է պայցուցում այդ ձեռագրի 306ա էջի լուսանցքում գրչի ձեռքով գրուած տեղեկութիւնը. «Ի ՈՁԵ (1236) Թաթարն էառ զԱնի եւ զամենայն տիեզերս» նախադասութիւնը¹: Դրանից յետոյ Անիի հետ կատարուած այլ ցնցող դէպքեր էլ են եղել, սակայն այսքանով աւարտուում է գրչի յաւելումը:

Ինչպէս ասուեց, ճշգրտուում է «Սանահինեան» կոչուած N 3160 ձեռագրի ընդօրինակման թուականը (ոչ թէ 1633-1652 թթ., այլ 1646-1681 թթ.²), այլեւ որոշուում են N 3502 ձեռագրի աւարտման ժամանակը՝ 1661 թ. եւ ամբողջ գրչագիրը ընդօրինակողի անունը՝ Մատթիա վարդապետ³:

Բնագիրը կազմելիս նկատի ենք ունեցել նաեւ միւս ձեռագրերի ընթերցումները: Իսկ երբ A ձեռագրին համընկել են ձեռագրերի մեծ մասի ընթերցումները, քննութեամբ առաւել վստահօրէն ենք դրանք տեղափոխել բուն բնագիր:

Բնագիրը կազմելիս մեր ձեռքի տակ են եղել ոչ միայն նշուած 8 ձեռագրերի տարընթերցումները, այլեւ A ձեռագրի լուսապատճենը եւ O ձեռագրի քսերոպատճենը:

N 2865 մայր ձեռագրի եւ հետագայում ընդօրինակուած միւս գրչագրերի առնչութիւնները, յատկապէս խմբաւորումները պարզելու համար առաջին հերթին հաշուի ենք առել երկու հանգամանք՝

1) N 2865 ձեռագիրը եւ հետագայում ընդօրինակուած միւս ձեռագրերն ինչպէ՞ս են համընկնում նիւթի ամբողջականութեան առումով:

2) N 2865 ձեռագրի նախագաղափար օրինակի սկզբնական յիշատակարանը եւ նրան անմիջապէս յաջորդած եւ աւելացուած նոր գրչի յիշատակարանն ինչպիսի՞ առնչութիւններ ունեն⁴:

Առաջին հարցադրումը պարզելու համար առանձնացրել ենք Ասողիկի գրքի ձեռագրերում պակասող տողերն ու ընդարձակ հատուածները:

1 Գ. Մանուկեան, Արիստակէս Լաստիվերցի, էջ 217, 237-238: Ըստ այս ուղղման՝ այժմ N 2865 ձեռագիրը համարուում է ԺԳ դարի ընդօրինակութիւն:

2 Նոյնը, էջ 243-244:

3 Նոյնը, էջ 238-242:

4 Այստեղ մկատի չունենմ հետագայում այլ էջերում աւելացուած միւս յիշատակարանները:

Բոլոր ձեռագրերում բացակայում է Ասողիկի գրքի բուն վերնագիրը, խաթարում կայ առաջին հանդէսի ցանկի սկզբնամասում¹:

Բովանդակային առումով եւս պակաս է առաջին հանդէսի սկիզբը: Պակաս է նաեւ առաջին հանդէսի (T₂) էջ 98 վ. 14 տողից սկսած մի հատուած²: Բոլոր ձեռագրերում պակաս է T₂-ի էջ 113, ն. 6-ից սկսած մի ընդարձակ հատուած: Այդ պակասը գրիչների կողմից չի նշուած ABEN ձեռագրերում, իսկ միւս ձեռագրերում կա՛մ դատարկ էջեր են թողնուած, կա՛մ դրանից բացի առանձին նշում է արուած: Օրինակ, D-ն դատարկ է թողել 3,5 էջ եւ յաւելել. «Ի յաւրինակն Թ էջ թողած էր»: Օ-ն տեղ է թողել եւ գրել. «Բ թողի՞ր յօրինակ պակաս է. անմիտ գրչիս չի մեղադրէք»: Ստ. Մալխասեանցը T₂ 360-362 էջերի այս պակասը լրացրել է Սեբէոսից (ծան. 87):

Միւս դէպքերում AGO ձեռագրերն ամբողջական են: Մի առանձին խումբ են կազմում CE ձեռագրերը, որոնք AGO ձեռագրերից շատ, իսկ միւսներից համեմատաբար քիչ են պակասաւոր: Այդ ձեռագրերում կան T₂ 132₅, 134₈ հատուածները, չկայ T₂ 144 վ. 10 – 145 էջերի շարադրանքը:

Միւս ձեռագրերը (BDFH, B-129, P) առաւել չափով են պակասաւոր:

N 2865 ձեռագիրը նկարագրուել է մի քանի անգամ³: Այն «Պատմագիրք Հայոց» ժողովածու է, բովանդակութիւնն է՝ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց (4ա-132ա), Ստեփանոս Տարօնեցի, Պատմութիւն (137ա-242 ա), Արիստակէս Լաստիվերցի, Պատմութիւն (242բ-342բ)...

A ձեռագիրն այժմ ձեռագրացուցակում նկարագրուել է այսպէս՝ ԺԳ դար, թերթ 312, մեծութիւն՝ 33,5×25, նիւթ՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ դրոշմազարդ տախտակ, գրութիւն՝ երկսիւն, տողեր՝ 28-30, գրիչ՝ Յոհան, գիր՝ բոլորագիր: Կան մի քանի յիշատակարաններ. նախագաղափար օրինակի յիշատակարանում գրող գրչի անունը չի պահպանուել, ԺԳ դարում այս ձեռագիրն ընդօրինակել է Յոհան գրիչը (242ա): Պահպանուել են տարբեր ժամանակաշրջաններում ձեռագիրը նորոգողների եւ կազմողների անունները:

N 2865 ձեռագրի գրչի՝ Յոհանի բուն յիշատակարանը գտնուել է Ասողիկի գրքի վերջում, Լաստիվերցու աշխատութեան սկզբում: Այդ յիշատակարանն առկայ է այդ խմբին պատկանող հինգ ձեռագրերում, բացառութիւն է N 4584 մատեանը, որը, սակայն, նման է 1482 ձեռագրին, որտեղ կայ այս յիշատակարանը: N 1482 եւ 4584 ձեռագրերը պատկանում են նոյն խմբին, քանի որ ունեն ընթերցումների ընդհանրութիւն: Յիշատակարանի սկիզբը եղել է այն մայր ձեռագրում, որից ընդօրինակուել է N 2865 ձեռագիրը: Յոհան գրիչը բարեխղճօրէն գծեր է քաշել նախագաղափար ձեռագրի յիշատակարանի տակ եւ գրել է իրենը. «Ընդ նմին եւ ես յետինս յամենեսեան եւ քան զբնաւս յանցաւորս եւ անթիւ մեղաւք ծանրաբեռնեալս եւ արժանիս բազում մահուց եւ ոչ մի կենաց, խաւարամած

1 Մաշտոցի անուան Մատենադարանի N 1883 (1639թ.) ձեռագրում միայն Խորենացու «Պատմութիւն Հայոցն» է եւ «Աշխարհացոյց»-ը: «Պատմութեան» վերջում կայ Ստեփանոս Ասողիկի գրքի ցանկի մի փոքր հատուած, այնպէս ինչպէս A ձեռագրում է: Գրիչը գրել է. «Վայ ինձ հազար բերան գծողիս անարժան, զի օրինակն ցանկ չկէր, եւ այս միայն էր, անմեղադիր լերուհ»:

2 Այն նկատել է Ստ. Մալխասեանցը, սակայն այդ «պակասը» չի նշուած եւ ոչ մի ձեռագրում:

3 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ ԺԹ-ԻԱ: «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցու», Եր., 1963, էջ 8-10: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Եր. 1965, էջ 891-892:

ողուով Յոհան գրիչ աղաչել յիշել յաղաւթս առաջի Քրիստոսի զիս եւ ծնաւդս իմ եւ զեղբայրն իմ, եւ զբամբկոցն...»¹:

Յոհան գրիչը, ինչպէս ասացինք, պահպանել է նախագաղափար ձեռագրի գրչի յիշատակարանը՝ այն գծերով տարանջատել է իր նոր յիշատակարանից: Ըստ երեւոյթին նրա ընդօրինակած ձեռագրի յիշատակարանում պահպանուած չի եղել նախորդ մայր ձեռագրի գրչի անունը:

Եթէ Յոհանը նրա անունը ջնջելիս լինէր, գծերով չէր տարանջատի նրա յիշատակարանն իր գրածից: Իրա ապացոյցներից մէկն էլ N 1482 ձեռագրում (էջ 89բ) նախորդ մայր ձեռագրի յիշատակարանի պահպանումն է՝ առանց նրա գրչի անունան նշումի: Այդ ձեռագրում չկայ ո՛չ Յոհան գրչի անունը եւ ո՛չ էլ նրա յիշատակարանը: Այստեղից թերեւս կարելի է եզրակացնել, որ N 1482 ձեռագիրն ուղղակիօրէն կամ միջնորդաւորուած ընդօրինակուել է N 2865-ի մայր ձեռագրից, որտեղ եւս չի եղել նախորդ գրչի անունը:

Հետագայում N 2865 ձեռագրից ընդօրինակելիս գրիչները ոչ միայն չեն պահպանել նախորդ գրչի եւ Յոհանի յիշատակարանները տարանջատող գծերը, այլեւ դէպքեր կան, որ անգամ ջնջել են Յոհանի անունը, նրա փոխարէն գրել իրենցը՝ շփոթ ստեղծելով որոշ «ուսումնասիրողների» մօտ: Այսպէս ՄՄ N 3070 մատեանի (1669-1674 թթ.) Գրիգոր գրիչը, մայր ձեռագրից արտագրելով այս յիշատակարանը, Յոհան անունան տեղը գրել է Գրգր (էջ 159ա), սակայն վերջինիս վրայ մէկ այլ ձեռքով գծեր են քաշուած եւ վրան աւելացուած Յոհան, որը N 2865 ձեռագրի գրչի՝ Յոհանի անունան վերականգնումն է, ոչ թէ մէկ այլ գրչի անունան յաւելում. այդ նոր ձեռագրի գրիչներից մէկի՝ Գրիգորի անունը պահպանուել է նաեւ 159ա էջում:

Ուշագրաւ է N 2865 եւ N 869 ձեռագրերի վերաբերեալ Մ. Աբեղեանի կարծիքը: Աբեղեանը խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի ձեռագրերը նախ բաժանել է անտիպ եւ տպագիր խմբերի, իսկ Հետագայում, երբ պարզուել է, որ անտիպների մէջ էլ կան տպագրուածներ, վերագասաւորել է այդ խմբաւորումները: Ա խմբի մէջ են մտնում Ամստերդամի տպագրութեան ձեռագրերը, իսկ Տ խմբին են պատկանում Վենետիկի տպագրութեան ձեռագրերը: Կայ նաեւ Խ (խառը) խումբ, որի մայրն է Համարել այժմ ՄՄ N 2865 Հնագոյն (XIII դ.) ձեռագիրը: Ըստ Աբեղեանի՝ փաստօրէն եղել են երկու մայր ձեռագրեր՝ Ա, Տ եւ Խ (խառը) խմբերի Համար: Ըստ Աբեղեանի՝ խառը խմբի ընդհանուր մայրը այժմ ՄՄ N 2865 ձեռագիրն է, որից ծագում են նոյն մատենադարանի NN 1482, 1883, 3160, 3502, 4856, Վենետիկի N 1156 ձեռագրերը: Եթէ սրանց աւելացնենք նաեւ N 3070, Ս. Պետերբուրգի B-129 եւ այլ ձեռագրեր, կստացուի, որ Ասողիկի՝ մեզ Հասած ութ ձեռագրեր, թերեւս նոյնիսկ աւելին, ծագել են միեւնոյն N 2865 ձեռագրից: Սակայն նշուած ձեռագրերի մեր նախընտրած խմբաւորումները, ըստ «Պատմութիւն տիեզերական»-ի նիւթի ամբողջականութեան, պակասող հատուածների առկայութեան եւ ըստ N 2865 ձեռագրի՝ նախագաղափար բուն օրինակի գրչի եւ Յոհանի յիշատակարանների առկայութեան՝ բնագրում եղած տարբերումների այդպիսի խոշոր խմբաւորում ստեղծելը չի դառնում միանշանակ, քանի որ դժուար է ապացուցել, թէ նշուած ձեռագրերից ո՞րն է ուղղակիօրէն եւ ո՞րը միջնորդաւորուած ընդօրինակուել N 2865 Հնագոյն ձեռագրից: Այստեղ կայ նաեւ մէկ այլ կարեւոր հանգամանք: Մ. Աբեղեանը գտնում է, որ Վենետիկի N 869 ձեռագիրը պատկանում է Տ (տպագիր) խմբին, ոչ թէ Խ (խառը) խմբին: Այն գրիչ Դաւիթ Ճնճղուկն

1 Գ. Մանուկեան, նշվ. աշխ., էջ 234-255:

ընդօրինակել է Վարդան Վարդապետի տուած տպագիր խմբին պատկանող մի լաւ եւ ընտիր ձեռագրից, որից կարկատուած են N 2865 ձեռագրի մաշուած էջերը¹: Այստեղ Աբեղեանը ներկայացրել է անհերքելի փաստ. N 2865 ձեռագրի վերանորոգուած էջերը ուղղագրութեամբ տարբերուում են նոյն ձեռագրի նորոգուած մասերից:

Ըստ Աբեղեանի՝ առանձնանում են երկու մայր ձեռագրեր՝ A ձեռագիրը (N 2865) եւ Վենետիկի N 869 ձեռագրի մէկ այլ մայր ձեռագիր: Սա, իհարկէ, չի բացառում: Սակայն երբ համեմատում ենք այս ձեռագրերը, հաշուի առնում նրանց պակասող տողերն ու հատուածները, համադրում ոչ միայն լուսանցքների յաւելումները, այլեւ այդ յաւելումների տեղադրման միաձեւութիւնը, եզրակացնում ենք, որ, իսկապէս, նրանք ծագել են տարբեր, բայց ըստ էութեան բաւականին միանման նախագաղափար ձեռագրերից, բայց, իհարկէ, ոչ հեղինակային բուն գրչագրից:

ԱՍՈՂԻԿԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԻԵԶԵՐՈՎԱԿԱՆ»-Ի
ՆՈՐ ԲՆԱԳՐԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Առաջին անգամ կազմելով Ստեփանոս Տարօնեցի Ասողիկի «Պատմութիւն Տիեզերական» (ձեռագրերում՝ «Պատմութիւն ժամանակաց») գրքի քննական բնագիրը՝ հիմք է ընդունուել պատմիչի մեզ հասած ամենահին, համեմատաբար ամբողջական եւ լաւագոյն ձեռագիրը՝ N 2865 (ԺԳ դ.), նկատի են առնուած նաեւ ՄՄ, NN 3502 (1663 թ.), 4584 (1668 թ.), Վենետիկի N 869 (1683-1684 թթ.) ձեռագրերը², ինչպէս նաեւ Ասողիկի գրքի երկու տպագրութիւնները՝ T₁ (1859 թ.), T₂ (1885 թ.): Յաճախ անհրաժեշտութեան դէպքում, բուն բնագրային ընթերցումը պարզելու համար դիմել ենք Մաշտոցեան Մատենադարանում պահուող մեր համեմատած ութ ձեռագրերին: Այսպիսի համեմատութիւն է կատարուել յատկապէս երրորդ հանդէսի բնագիրը կազմելիս, քանի որ այդ հանդէսը, ինչպէս ասուած է, ինքնուրոյն աշխատանք է եւ պատմագիտական, աղբիւրագիտական առումներով բացարձակ արժէք է ներկայացնում:

Այստեղ է տեղադրուած նաեւ Սեբաստիայի մետրապօլիտին ուղղուած Հայոց Խաչիկ Ա. կաթողիկոսի հրամանով գրուած ընդարձակածաւալ պատասխան «Թուղթը», որը, սակայն, գրիչների կողմից տեղ-տեղ աղճատուել է. այն փորձել ենք ճշգրտել ութ ձեռագրերի եւ երկու տպագիրների համաձայն:

Առաջին հերթին կարեւորուել են Ասողիկի ձեռագրերի մեծ մասի մայր A (N 2865) գրչագրի ընթերցումները, սակայն այստեղ եւս կան խնդրահարոյց հարցեր: Զեռագիրը վերջնականապէս բառանջատուած չէ, նախադասութիւնները եւս ամբողջովին տարրորչուած չեն, չկայ համապատասխան կէտադրում, միայն առանձնացուած նախադասութիւններն սկսւում են մեծատառով, աւարտուում վերջակէտով: Յատուկ անունները գրուած են փոքրատառով: Նախադասութիւնները քերականօրէն եւ տրամաբանօրէն առանձնացուած չեն: Ընդօրինակուած բոլոր ձեռագրերում եւ նոյնիսկ T₁ եւ T₂ տպագրութիւններում դրանք յաճախ ներկայացուած են բաւականին ծաւալուն՝ ինքնակամ կէտադրմամբ:

Ինչպէս ասուեց, Ասողիկն առաջին, երկրորդ հանդէսներն ամբողջովին, իսկ երրորդ հանդէսի միայն սկզբնամասը շարադրել է ըստ Ե-Թ դարերի գրութեան կնիքն ունեցող

1 Մ. Աբեղեան, նշ. աշխ., էջ Ժ-ԻԱ:

2 N 4584 ձեռագիրն Ասողիկի գրքի Բ հրատարակութեան հիմքն է: Այն եւս համեմատեցիմք՝ նոր կազմուած քննարկի առաւել ամբողջական դարձնելու նկատառումով:

Հայոց մատենագրութեան գրաւոր փաստերի, ինչպէս նաեւ N 2865 ձեռագիրն ընդօրինակուել է ԺԳ դարում, երբ գրաբարն այլեւս խօսակցական չէր, եւ միջին Հայերէնն այս կամ այն չափով ներթափանցել էր գրաբարով գրուող պատմագեղարուեստական արձակ, անգամ չափածոյ խօսք: Այստեղ կայ նաեւ ընդօրինակուած ձեռագրերի գրիչների գործօնը. նրանք եւս գրաւոր խօսքում խօսակցական լեզուի ազդեցութեամբ կատարել են գրաբարեան կանոններից շեղումներ: Այս ամենը յատկապէս գրուել է N 2865 ձեռագրի բաղաձայնական համակարգում: Նշենք մի քանի փաստեր:

Յայտնի է, որ գրաբարի բաղաձայնական համակարգը եռաշարք է՝ ձայնեղ, խուլ եւ շնչեղխուլ կիրառմամբ: N 2865 ձեռագրում կան ուշագրաւ դրսեւորումներ:

1) Խուլ բաղաձայնների ձայնեղացում՝ պ>բ, կ>գ, տ>դ, ծ>ձ, ս>զ, խ>ղ: Օրինակ՝ ցանգ, փխ. ցանկ, խորամանգ, փխ. խորամանկ, Մաշոց, փխ. Մաշտոց, Պոնդոս, փխ. Պոնտոս, ը-ռուզ, փխ. ռուս...:

2) Ձայնեղների խլացում՝ բ>պ, դ>տ, գ>ս, դ>խ, ջ>ճ: Օրինակ՝ Սմաատ, ապստամպել, Մուշեխ, բուլխարաց...:

3) Խուլերի շնչեղխլացում՝ կ>ք, օր.՝ մաքիթ, փխ. մակիթ...:

4) Շնչեղխուլների ձայնեղացում՝ փ>բ, ք>գ, չ>ջ, թ>դ: Օր.՝ ընդ վաջէիւք, փխ. ընդ վաջէիւք (վրանի կամ սայլի ծածկի տակ): Յղբութիւն, փխ. յղփութիւն, պատրիարգ, փխ. պատրիարք, քերական, փխ. քերթող...:

Ուշագրաւ է նաեւ լ>ղ փոխանցումը, որն ըստ Հ. Աճառեանի՝ Հայերէնում ձեւաւորուել է Թ-Ժ դարերում, ետնալեզուային լ բաղաձայնն աստիճանաբար արտասանութեամբ կոչտացել է եւ վերածուել ետադաս ղ (դատ) հնչիւնի¹:

Կարծիք կայ, որ գրաբարում եղել է միջնալեզուային ղ՛, որը միացել է ետնալեզուային ղ-ին, եւ ստացուեցին ետադաս՝ ղ, նախադաս՝ ղ²:

Այս դրսեւորուել է N 2865 ձեռագրում եւս, սակայն առաջացել են նաեւ զուգաձեւութիւններ: Օր.՝ լ>ղ. այլ//այլ, այլեւայլ//այլեւայլ, Հերակղ//Հերակլ, Ղեւոն/Ղեւոն եւ այլն:

Յայտնի է, որ Ե դարում է-ն արտասանուել է եյ, իսկ ե-ն՝ է: Հետագայում բառավերջում ե չի գրուել: Ա ձեռագրում հիմնականում պահպանուել է այս կանոնը: Գրուել են թե, եթե, ինչպէս նաեւ անցեալ անկատարի վերջաւորութիւնները՝ եի, եիր, եր եւ այլն: Մինչեւ ԺԳ դարը Հայերէնում չի գործածուել Ֆ տառը, դրա փոխարէն կիրառուել է փ-ն, բնականօրէն N 2865 ձեռագրում Ֆ չի գործածուած:

N 2865 ձեռագրում պահպանուել են գրաբարեան երկբարբառներ՝ առանց պատմական հնչիւնափոխման՝ աւ, ոչ թէ օ, եւ, առանձին դէպքերում՝ իւ, թուական, ոչ թէ թվական: Եւ գրուել է եւ, և գրութեամբ:

Ուղղագրական այս եւ այլ ձեւեր ներթափանցել են N 2865 ձեռագրից ընդօրինակուած գրչագրերը, հետեւաբար դրանց միատեսակ դարձնելու հարցը մտահոգել է եւ T₁, T₂ հրատարակիչներին, ինչպէս նաեւ T₃ բնագիր կազմողին: T₃-ում ճիշտ համարուած ընթերցումը ներկայացուած է բուն բնագրում, իսկ միւս ընթերցումներն արտացոլուած են տարընթերցումների բաժնում:

Բնագիրը կազմելիս առաջնորդուել ենք հետեւեալ սկզբունքներով:

1 Հր. Աճառեան, Երբ է Լ դարձաւ Ղ, «Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1948, N 5:

2 Ս. Գիւլբուղաղեան, Հայերէնի ուղղագրութեան պատմութիւն, Եր., 1973, էջ 17-19, 78-83:

1) Փորձել ենք կարգաւորել նախադասութիւնները, կէտադրել ենք ըստ ժամանակակից հայոց լեզուում գործող հիմնական կանոնների, երբեմն էլ հաշուի ենք առել նաեւ գրաբարեան համահասարակ բնագրերի ավանդական կէտադրումը:

2) Յաճախ առաջնութիւնը տրուած է *A* ձեռագրի ընթերցմանը, եթէ այն աւելի նախնական է եւ ճշգրիտ: Օր.՝ գեւղ//գիւղ, թուական// այլ ձեռագրերում՝ թվական, եւթն, այլ ձեռագրերում՝ եօթն. նախընտրուած են՝ գեւղ, թուական, եւթն ընթերցումները:

3) Եթէ *A* ձեռագրի ընթերցումն ունի զուգաձեւութիւններ, որոնցից մէկը յաճախ կրկնուում է կամ խմբաւորուում այլ ձեռագրերի նոյնատեսակ ընթերցմամբ եւ լեզուական առումով ճիշտ է, ընտրուած է այդ ընթերցումը:

4) Նկատի են առնուել նաեւ ձեռագրերում եղած յետին ուղղումները: Այդպիսիք կան յատկապէս *BCDO* ձեռագրերում (*bcdο*)¹:

Եթէ որեւէ ձեռագրի յետին ուղղումը ճիշտ է, առաջնութիւնը տրուած է նրան: Օր.՝ *D* ձեռագրի *d* յետին ուղղումները բաւականին շատ են եւ հիմնականում ճշգրիտ են. ըստ երեւոյթին համեմատուած են լաւագոյն ձեռագրով: Երբեմն բնագիր ենք տեղափոխել այդ *d* ուղղումը, իսկ *D* ձեռագրի ընթերցումը թողել ենք տարընթերցումների բաժնում: Յաճախ *BD* ձեռագրերն իրենց ընթերցումներով միաւորուում են, որն օգնում է միմեանցով ճշգրտել նրանց ընթերցումները:

5) [] փակագծերում նշուում են Ստ. Մալխասեանցի յաւելումները, իսկ () փակագծերում՝ նոր յաւելումներն ու ճշգրտումները:

6) Յետին ուղղումներ կատարելիս բնագրում նշուում է ուղղուած բառը, իսկ տարընթերցումների բաժնում բառի բուն բնագրային մասը դրուում է կլոր փակագծերում, իսկ յաւելուող մասը՝ փակագծերից դուրս: Յաւելուող բառից առաջ լատինատիպ փոքրատառով նշուում է ձեռագրի յետին յաւելուած բառը կամ բառի յաւելուած մասը:

7) Նորայր Բիւզանդացու «Նախնիք»-ում եղած մօտ 80 ուղղումները նոյնութեամբ դրուած են բնագրում, իսկ ուղղումը՝ ՆԲ.Ն. Համառօտագրութեամբ՝ տարընթերցումների բաժնում:

8) Գործածուած են չիք (= չկայ) եւ փի (= փոխարէն) կրճատ գրութիւնները:

9) Ընդգծուած մեծատառերով են թիւ կամ թուական նշանակող տառերը²:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ա. ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տիեզերական պատմութիւն Ստեփաննոս վարդապետի Տարօնեցոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կարապետ վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859:

2. Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. երկրորդ տպագրութիւն, բնագրի կազմումը եւ ծանօթագրութիւնները Ստ. Մալխասեանցի, Ի Ս. Պետերբուրգ, 1885:

Գրախօսութիւնը տե՛ս Ֆր. Միւլլէր, «Հանդէս ամսօրեայ», 1888, էջ 128–130:

1 Միւսնոյն ձեռագրում երբեմն կան տարբեր ձեւով գրուած յետին ուղղումներ, որոնք տարբերակուած չեն միմեանցից:
2 Յատկապէս *A* ձեռագրում տառանկիչերով տրուած թուականները մեծ մասամբ աղաւաղուած չեն, կան չնչին բացառութիւններ:

3. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, գիրք Ա.-Բ (համա-
բարբառ), կազմեց Ս. Մ. Ղազարեանը, Երեւան, 1987:

բ. ԹԱՐԳՄԱՌԻԹԻԻՆՆԵՐ

1. Всеобщая история Степаноса Таронского, Асох'ика по прозванию, писателя 11-го сто-
летия, переведена с армянского и объяснена Н. Эминым, Москва, 1864.

2. Histoire universelle par Etienne Acoghig de Daron, traduit de l'arménien et annoté par E. Dulaurier,
Paris, 1883.

3. Das Stephanos von Taron Armenische Geschichte, aus dem Altarmenischen ubersetzt von H. Gelzer
und Aug. Burckhardt, Leipzig, 1907.

Գրախօսութիւնները տե՛ս A. Meillet, «Revue Critique», 1908, p. 281; E. W. Brooks, «English
historical Review», 1908, N 23, p. 243; K. Krumbacher, «Geschicthe der Byz. Lit.», 1908, p. 406.

4. Acoghic of Taron (Etienne), Histoire Universelle, traduit de l'arménien et annotée par Frederic
Macler, Paris, 1917.

5. Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմութիւն, աշխարհաբար
թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Վ. Հ. Վարդանեանի, Երե-
ւան, 2000:

գ. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. **Արգարեան Գ. Վ.**, Կարծեցեալ Ստեփանոս Տարոնացիին նոյն ինքը Ստեփանոս
Տարոնացի Ասողիկին է, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1962, N 1, էջ 210-255:

2. **Արեղեան Մ. Խ.**, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, տե՛ս Հայոց հին գրականութեան
պատմութիւն, հտ. 1, Եր., 1944, էջ 507-511:

3. **Ալիշան Ղ.**, Ստեփանոս Ասողիկ, տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, հտ. Ա, Վենետիկ,
1901, էջ 89:

4. **Բարայեան Լ. Հ.**, Դրուագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի
պատմութեան (IX-XIII դարեր), Երեւան, 1981, էջ 114-125:

5. **Բիւզանդացի Նորայր**, Հայկական բառաքնութիւն. ուղղութիւնի ընթերցուածոց,
մատենագրութիւնի նախնեաց եւ նշանակութեան բառից ինչ, Կ. Պոլիս, 1880:

6. **Բիւզանդացի Նորայր**, Տեղեկութիւն ի գիրս Պատմութեան Ստեփանոսի Տա-
րոնեցոյ Ասողիկ կոչեցելոյ, Մոսկուա, 1889:

7. **Բիւզանդացի Նորայր**, Նախնիք, Ժնեւ, 1996:

8. **Զամինեան Արք.**, Հայ գրականութեան պատմութիւն, Ա. մաս, Նոր Նախիջեւան,
1914, էջ 155-157:

9. **Զարպիանալեան Գ.**, Պատմութիւն հայ հին դպրութեան (Դ-ԺԳ դար), Վենետիկ,
1932, էջ 555-560:

10. **Մաթեոսեան Ա.**, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը եւ Անանիա Շիրակացու
Քննիկոնը, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1986, N 3, էջ 125-133:

11. **Մանուկեան Գ.**, Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ) եւ Արիստակէս Լաստիվերցի,
տե՛ս Գ. Մանուկեան, Արիստակէս Լաստիվերցի, Եր., 1977, էջ 226-232:

12. Մելիք-Բախշեան Ստ. Տ., Հայոց պատմութեան աղբիւրագիտութիւն, Երեւան, 1979, էջ 156-162:

13. Վարդանեան Վ. Վ., Ստեփանոս Ասողիկ Տարօնացիի բանասիրութեան մէջ, տե՛ս «Բանբեր Երեւանի համալսարանի», 1996, N 3, էջ 148-153:

7 Յաւուրս սորա շինեցան կրաւնաւորանոցք, ճգնաւորականաց տեղիք Սեւորդեաց աշխարհին, հաւասարակեացք³¹, միաբանականք, ըստ յառաջասացեալ³² կանոնին սահմանադրութեան սրբոյն Բարսղի, որոց երկոցունց տեղեացն առնուանք Հաղբատ եւ Սանահին հանդէպ միմեանց, միակրաւնք ի տան Աստուծոյ՝ արանց Շոց³³: 8 Եւ առաջնորդ Սանահինի³⁴ Յովհաննէս գիտնական այրն Աստուծոյ, իսկ Հաղբատայ՝ Սիմէոն³⁵ ճգնազգեաց ծառայն Քրիստոսի:

1 C սամուսաթ
2 CO քվականին BD քվին
3 A կոստանտին
4 B Գ
5 CO քվականին BD քվին
6 O վաղնանեցաւ
7 ABCO չիբ գրուիս
8 AO (գրուի) Ը
9 BD քագաւորութեան
10 C աւուրս
11 ABCO գործեցան
12 C չիբ սրբութեան տեղեացն O տեղեաց
13 B արասա
14 ABCD շահնշահն O շահնշահ
15 ABD գամենեքումբ
16 BD զգոնջացեալսն d (զգո)ն(ջացեալսն) C զգոնջացեալսն
17 BD զկոյրսն
18 BT₂ չիբ եւ

19 B իշխան
20 ABCDO կիւրապաղատս
21 B չիբ եւ
22 ACO գրոսն
23 A ըմպելիք BO ըմպելիք (ըմպելիք(ոք))
24 BD ընդ գինոյն
25 C յայնքան
26 BD իւր
27 A այլ
28 ABO քազմականաց C գրազմականաց
29 O կարօտելոցն
30 A տնանկաց
31 B հաւատարակեացք
32 B ըստ առաջասացեալ
33 ABCDEO Շոց
34 ACO սանահին BD սանահին
35 ABC սիմէոն

9 Այլ¹ Տէր Անանիա² լցեալ զաւուրս
իւր բարւոք ծերութեամբ՝ ի ՆժԴ թուա-
կանին վախճանեցաւ³:

10 Եւ ապա եկաց կաթողիկոս⁴ Վահա-
նիկն⁵ ի Բաղաց գաւառէ, որդի Ջուանշիրի
իշխանի Բաղաց: 11 Սա ընդ քաղկեդոնա-
կանս⁶ սիրելութիւն եւ⁷ հաճութիւն կամե-
ցաւ առնել թղթովք⁸: 12 Յորոյ վերայ ժո-
ղովեցան կրաւնաւորքն⁹ Հայոց ի քաղաքն
Անույ. Տէր Խաչիկ՝ Արշարունեաց եպիսկո-
պոս¹⁰ եւ հայր Պողիկարպոս¹¹ առաջնորդ
կամրջաձորոյ¹² եւ հայրն¹³ Սարգիս՝ Հոռո-
մոսի վանաց վանական եւ հայր Ստեփա-
նոս¹⁴ Սեւանայ¹⁵ վանաց վանական, եւ այլ
եպիսկոպոստունք եւ հարք¹⁶ բազումք:
13 Իսկ Վահանիկն փախստեայ¹⁷ անկանի
ի Վասպուրական, առ Ապուսահլ¹⁸ թագա-
ւոր Վասպուրականի, որ էր որդի Գագ-
կայ¹⁹ Արծրունւոյ²⁰: 14 Իսկ ժողովն կա-
մակցութեամբ²¹ Աշոտոյ Շահանշահի²² կա-
թողիկոս²³ հաստատեաց²⁴ Հայոց²⁵ զՍտե-

փանոս²⁶ վանական Սեւանայ²⁷: 15 Եւ յեր-
կոցունց կողմանց նզովիւք լցին զաշ-
խարհս Հայոց: 16 Իսկ Ստեփանոս²⁸ վար-
դապետն մեծ, որ էր յաստիճան երանել-
ւոյն²⁹ Մեսրոբայ³⁰ եւ³¹ հովուէր³² զարեւմ-
տեայ կողմն³³ Հայոց, ժողով բազմութեան
կրաւնաւորաց արարեալ ի Տարաւնոյ, ի
Հաշտենից, ի Ծոփաց եւ ի Խորձենոյ³⁴
հանդերձ Մովսիսի³⁵ վարդապետաւ եւ
Բաբկենիւ³⁶ ընտիր արամբ, որ էր յաշխար-
հէն³⁷ Սիւնեաց՝ երթայր ի Վասպուրական՝
ի յանդիմանութիւն Վահանայ եւ Ապու-
սահլի³⁸:

17 Իսկ նոցա վաղէսաբար արարեալ, ոչ
տեսեալ³⁹ զնոսա եւ ոչ լուեալ ինչ՝ հրամա-
յեցին աքսորել⁴⁰ ի⁴¹ յԱխթամար կղզի⁴²
զՍտեփանոս⁴³ եւ զՄովսէս վարդապետ եւ
զհայր Բաբգէն⁴⁴: 18 Եւ ապա զհայր⁴⁵
Բաբգէն եւ զՄովսէս արձակեալ եւ⁴⁶
զՍտեփանոս⁴⁷ ի Կոտորաց⁴⁸ բերդն փոխե-
ցին, որ եւ մեռաւ ի նմին, ոչ զիտեմ⁴⁹, թէ

1 A այդ
2 BCD անանիայ
3 AC վախճանի ի ՆժԴ բուականին C վախճանի ի
ՆժԳ քվականին B ի ՆժԳ քվին վախճանեցաւ O
վաղմանի ի ՆժԴ քվականին
4 A կաթուղիկոս
5 C վաղանիկն
6 ABCDO քաղկեդոնականսն
7 ABCDEO չիբ եւ
8 T1 թղթովք առնել
9 ACE կրօնաւորացն
10 A եպիսկոպոս O եպիսկոպոս արշարունեաց
11 BDO T1 պողիկարպոս C պողիկարպոս
12 AC կամրջաց ձորոյ O կամրջաձորոյ o (կամրջա)ց-
(ձորոյ) T1 կամրջաձորոյ վանական
13 ACO հայր սարգիս
14 ABC ստեփաննոս
15 BD սեւանայ C սեւանա
16 BCD հայրք d հարք
17 ABCD փախստեա
18 A ապուսահլ
19 BD գագկա
20 BC արծրունոյ
21 O կամակցութեամբն
22 ABCO շահնշահի
23 A կաթուղիկոս
24 ABCO հաստատեցին

25 BD չիբ հայոց
26 ABCO գտեփաննոս
27 BD սեւանա
28 ABCDO ստեփաննոս
29 ABCO երանելոյն
30 BC մեսրոպայ
31 BD չիբ եւ
32 AB հովուել O հովել
33 ABD գարևմտեա C գարևմտեան կողմն d (գարև-
մտեա)յ
34 CE ի խորձենից
35 ABC մովսէսի
36 ABCDO բաբգենիւ
37 C աշխարհէն
38 O արուսահլի
39 BDO ոչ տեսանել d ոչ տեսեալ
40 B յախորել
41 O չիբ ի
42 B կղզին
43 ABCDO գտեփաննոս
44 A (գհայր բաբգէն) արձակեալ
45 B գհայրն
46 a եւ (գտեփաննոս)
47 BD գտեփաննոս
48 ABCDEO ի կոտորոց
49 AO ոչ գիտեմք

նենգութեամբ ինքեանց եւ¹ թէ այլով պատճառաւ²: 19 Եւ ապա Վահանիկն եւ Ստեփանոս³ ի միում ամի վախճանեցան⁴, եւ բարձաւ խոովութիւնն⁵ յաշխարհէս Հայոց:

20 Այլ⁶ յաւուրս Ռոմանոսի՝ Յունաց թագաւորի էր մաթիստրոս⁷ Նիկիփոս⁸ եւ պատրիկ Կիւռ-ժան, որք⁹ զարհուրեցուցանէին զամենայն Տաճկաստանեայս¹⁰ զաւրութեամբ իւրեանց: 21 Եւ ի մեռանել Ռոմանոսին նոքա պաշարեալ էին¹¹ զԱնաւարգայ¹² եւ զՀալպ, զորս¹³ եւ առին իսկ:

22 Եւ թագաւորեաց ի Կոստանդնուպոլիս¹⁴ Մարինոս¹⁵ ոմն: 23 Իսկ Նիկիփոս¹⁶ եւ Կիւռ-ժան ամենայն զաւրաւքն գան յեզր ծովուն Յունաց: 24 Եւ մտեալ Կիւռ-ժան ի Կոստանդնուպոլիս¹⁷ ընկենու զՄարինոս¹⁸ եւ թագաւորեցուցանէ զՆիկիփոս¹⁹ ի ՆժԲ թուականին²⁰, որ թագաւորեաց ամս է: 25 Սա քաջապէս յաղթեաց իսմայէլական²¹ զաւրուն, յոլով քաղաքս²² Հանեալ ի նոցանէ՝ զՄսիս ի ՆժԳ թուականին²³, զՏարսոն²⁴ ի ՆժԳ թուականին²⁵:

26 Եւ ապա ի ՆժԵ²⁶ թուականին խաւարեցաւ արեգակն²⁷, եւ վախճանեցաւ²⁸ Տարաւնոյ²⁹ իշխանն Աշոտ: 27 Եւ Տարաւնոյ Հոռոմք տիրեցին:

28 Եւ ի ՆժԷ թուականին Վարդ՝ եղբաւորդի Նիկիփոսայ³⁰ զաւրու ծանու գայ յԱպահունիս, պաշարէ զՄանազկերտ քաղաք. եւ առեալ զնա՝ ի հիմանց բրեալ³¹ խրամատեաց զպարիսպ նորա: 29 Եւ ապա ի ՆժԸ թուականին³² առնու զԱնտիոք³³ Մեծ քաղաք Ասորոց:

30 Եւ ի նմին ամի սպան Կիւռ-ժան զՆիկիփոս³⁴ ի պաղատանն նենգութեամբ թագուհւոյն³⁵ մաւր Վասլին³⁶, եւ ինքն թագաւորեաց ամս Զ: 31 Իսկ Վարդ դուքսն մեծ՝ եղբաւորդին Նիկիփոսայ³⁷, ապստամբեալ³⁸ թագաւորեաց ի ժողունգն: 32 Ընդ որ պատերազմեալ յաղթողն³⁹ Կիւռ-ժան, յաղթեաց եւ էարկ⁴⁰ զՎարդ ի բանտ⁴¹ ի կղզին⁴²:

33 Եւ ինքն գնաց յաշխարհն Բուղարաց՝ պատերազմել ընդ նոսա⁴³: 34 Որոց⁴⁴ զագզն Ռուզաց⁴⁵ աւգնական առեալ⁴⁶

1 ABCO չի՛բ եւ (թէ)
2 O պատմառով
3 ABD ստեփաննոս
4 O վաղնանեցան
5 BD խոովութիւն
6 A այլ
7 ACO մաթիստոս
8 ABCO միկիփոս
9 ABCOT₁ որ
10 ACDO տանկաստանայս do (տանկաստան)ե(այս)
11 A պաշարեալ եին
12 BD զանաւարգա
13 ABCDO որ
14 A ի կոստանտնուպոլիս BCO ի կոստանդնուպոլիս
15 ACDEO մառինոս B չի՛բ մարինոս... ի կոստանդնուպոլիս (ընկենու):
16 A միկիփոս BDE միկիփոս
17 AD կոստանտնուպոլիս CO կոստանդնուպոլիս
18 ABCO զմառինոս
19 ABCDEO զմիկիփոս
20 BD չի՛բ ի (ՆժԲ) BD քվին CO քվականին
21 A իսմայելական O իսմայելական
22 C քաղաք
23 CO քվականին BD քվին T₂ չի՛բ քուականին

24 ABCO գտարսուս
25 A (ի ՆժԳ) քուակ.
26 ABCO ի ՆժԶ B քվին CO քվականին
27 AO արեգակն
28 O վաղնանեցաւ
29 C տարաւնոյն
30 ABCEO միկիփոսայ
31 ABCO բրեաց
32 A ի ՆժԸ քու. CO քվականին
33 ACDE զանտոնք BD չի՛բ ի ՆժԸ քուականին առնու (զանտոնք) d (եւ ապա) ի ՆժԸ քուին d չի՛բ առնու
34 ABCDO զմիկիփոս E զմիկիփոս
35 BD քագուհոյն
36 BD մորն վասլի O մորն վասլին
37 ACO միկիփոսայ
38 A ապստամբեալ
39 BCDO յաղթողն
40 A եարկ
41 BDO բանդ
42 ACO ի կղզի
43 T₁ ընդ նոցա
44 ABCDO որոյ T₁ որոց
45 T₁ զագզն ոռուզաց
46 T₁ (օգնական) եղեալ

ելանեն¹ ի² մարտ ընդդէմ նորա³. եւ ի ճակատելն ընդ միմեանս՝ գերկուս թեւս ճակատուն Յունաց վանէին⁴ Ռուզքն⁵:
 35 Իսկ⁶ թագաւորն ամենայն հետեւակ զաւրուն Հայաստանեաւքն⁷ անշարժ մնացեալ ի միջոցի⁸ ճակատուն, որ քաջապէս նահատակեալ գունդ հետեւակացն, որ սաղարքն ասին՝ առաջի թագաւորին պատառեալ զվահանափակն, որ ընդդէմ նոցա:
 36 Անդր թագաւորին⁹ ամենայն հեծելագունդ¹⁰ զաւրաւքն մտեալ եւ սուր ի գործ շահատակեալ՝ սրախողխող զնոսա առնելով եւ ցիր եւ ցան վայրացն¹¹ տուեալ՝ ի հնազանդութիւն նուաճեաց զազգն Բուլղարաց:

37 Այս Կիւռ-ժան բազում գործս արութեան¹² ի մանկութենէ ցուցեալ զարմացուցանէր զբազումս, որ եւ¹³ ի թագաւորելն՝ ինքնակամ հնազանդեցան հարկատրութեամբ ազգն Տաճկաց ըստ հարաւոյ կուսէ եւ ազգն Սարմատացւոց, որ ըստ հիւսիսոյ¹⁴, եւ ազգն Վրաց, որ ըստ արեւելից:

1 BD չի՛բ ի
 2 BD չի՛բ ի
 3 BD ընդ նմա
 4 A վանեին
 5 O ոռուսն d (ոռուս)(ոռուս)
 6 AE (իսկ) որ
 7 AB հայաստանոփ C հայաստանոփ O հայաստանոփն օ հայաստանոփ
 8 B ի միջի
 9 ABC ընդ թագաւորն O ընդ թագաւորին ՆԲՆ. («ոռնիս» մտեալ պահանջէ անդր T2 Մն. 2 «թերեւս անդ»
 10 B չի՛բ հեծելագունդ
 11 C վայրեացն
 12 AC արութեան a ի մանկութեան A ցուցեալ B արիութեան O արութեան
 13 C չի՛բ եւ
 14 AD ըստ հիւստոյ C ըստ հիւստոյ

ԳԼՈՒԽ¹⁵ Թ.¹⁶

Յաղագս¹⁷ կաթողիկոսութեան Տեառն Խաչկայ եւ շինելոյ գեկեղեցին եւ գտուն կաթողիկոսարանին¹⁸ ի գիւղն Արգինայ¹⁹

1 Յաւուրս Կիւռ-ժանայ Յունաց կայսեր եւ²⁰ ի թագաւորութեան²¹ Հայոց Աշոտոյ²² ի ՆԻԱ թուականին²³, գկնի Վահանայ²⁴ եւ Ստեփանոսի²⁵, եկաց կաթողիկոս²⁶ Հայոց Տէր Խաչիկ եպիսկոպոս²⁷ Արշարունեաց քուերորդի²⁸ Տեառն Անանիայի²⁹, որ միապետեալ խաղաղացոյց զաշխարհս Հայոց ամս ժԹ: 2 Եւ նորոգեաց գտուն կաթողիկոսարանին³⁰ ի Շիրակ գաւառի ի գիւղաքաղաքին Արգինայ³¹, յեգերս Ախուրեան գետոյ, ի հանգստարանի³² Տեառն Անանիայի³³ Հայոց վերադիտողի: 3 Եւ ի նմին գեղ³⁴ շինեաց գտուրբ կաթողիկէ³⁵ եկեղեցին վիմարդեան կոփածոյիւք, հաստահեղոյս արձանաւք գմբէթարդ³⁶ խորան³⁷ երկնանման, հանդերձ եւս երիւք ե-

15 ABCDO չի՛բ գլուխ
 16 AO (գլուխ) Թ
 17 A Յաղագս կաթողիկոսութեանն O կաթողիկոսութեանն
 18 A կաթողիկոսարանին
 19 ABCO չի՛բ ի գիւղն Արգինայ
 20 T2 չի՛բ ի
 21 CO թագաւորութեանն
 22 ABCO աշոտի
 23 BCD չի՛բ ի (ՆԻԱ) CO թվականին BD թվին
 24 BD վահանա
 25 BC ստեփաննոսի
 26 AD կաթողիկոս
 27 A եպիսկոպոս B եպիսկոպոսն
 28 O քուերորդի D քուերորդի
 29 O անանիայի
 30 A կաթողիկոսարանին
 31 ACE ի գեղաքաղաքին արգինայի B գեղաքաղաքին BDO արգինայի
 32 A ի հանգստարանի
 33 AO անանիայի
 34 O գիւղ T2 գեղ
 35 A կոթողիկէ B չի՛բ գտուրբ
 36 B կմբէթ արդ CE գմբէթարդ
 37 B խորանն

կեղեցեաւք¹ նոյնաձեւ, հրաշատեսակ²,
չքնաղագեղ յաւրինուածովք³, եւ զարդա-
րեաց մեծապայծառ, ծիրանածաղիկ, ոսկե-
թել⁴ անկուածովք⁵ ի զարդ ոսկւոյ⁶ եւ ար-
ծաթոյ եւ ամենագարգ⁷ պայծառութեան
Չահաբորբոք լուսաւոր անաւթոց. այլ եւ
զաստուածախաւս կտակս յոլովակի ստա-
ցեալ⁸, զԳիրս սուրբս զառաքելասացս եւ
զմարգարէաքարոզ պատգամս, հանդերձ
ամենայն վարդապետացն ճայնիւք:

4 Եւ յաւուրս սորա⁹ էին վարդա-
պետքն¹⁰ Յովհաննէս՝ խաչակիրն Քրիստո-
սի, որ տկար բանիւ եւ մեծ գիտութեամբ
բացայայտէր զգիտութիւն Գրոց սրբոց:
5 Սա մեռաւ ի մոլեալ ազգէն¹¹ վրաց սրով
եւ թաղեցաւ ի վանս, որ Ակսիգոմս ասի, ի
Բասեան գաւառի, եւ այժմ սուրբ¹² Յով-
հան, առ ստորոտով լերինն Միրանեաց:

6 Հանգոյն նմին եւ առատ գիտու-
թեամբ գերամաքուր¹³ հայրն Յովսէփ՝ ա-
ռաջնորդ ուխտին, որ Հնձուցն անուանի
վանք, ի Կարին գաւառի:

7 Եւ Կիրակոս¹⁴ գծակերպ գիտնա-
կանն, որ վարուք¹⁵ առաւել քան թէ բա-
նիւք¹⁶ վարդապետէր. որ բնակէր յոլովակի
յանապատին, որ Թեղենիսն կոչի, ի Նիգ
գաւառի, առ հաւր Երեմիայի ճգնաւորին¹⁷
Քրիստոսի եւ ընկերակցի իմոյ:

1 ABCEO Գ եկեղեցովքն
2 ACEO հրաշատեսիկ
3 ABDE յորինուածով
4 BCD ոսկեթել
5 ABCDEO անգուածովք
6 BD ոսկոյ
7 T₂ ամենայն գարդու
8 B ըստացեալ
9 A սորա եին CE սորայ էին
10 T₁T₂ վարդապետքն
11 B յազգէն
12 B սուրբն
13 B գեղամաքուր
14 ABCDO կիրակոս
15 BD վարիւք
16 B բանիւ
17 CDEO ճգնաւորի

8 Եւ վայելչաբանն Սարգիս յաշխար-
հէն Աղուանից, որ ի մանկութենէ զԳիրս
սուրբս ի բերան առեալ եւ ծերացեալ արդ:
9 Եւս եւ¹⁸ Յովհաննէս քահանայ յամուս-
նացելոց:

ԳԼՈՒԽ¹⁹ Ժ²⁰

Վասն²¹ պատերազմին Յունաց որ²²
յԱմիթ²³, եւ երեւման աստեղն. եւ
մահուանն²⁴ Կիւռ-ժանայ²⁵ թագաւորին²⁶

1 Իսկ Կիւռ-ժան թագաւորն Յունաց
բերաւոր զաւրաւք զՄլեհ դեմեսիլիոսն²⁷
առաքէ յԱմիթ. որ եկեալ պաշարէ²⁸ զԱ-
բութալհապ²⁹ թոռն Համտունայ³⁰: 2 Եւ
յանկարծ յեղակարծ³¹ ժամու արք Ն սուսե-
րամերկք, հեծեալք յերիվարս³² ի բաց ե-
լանէին ընդ դուռն քաղաքին, սուսերա-
հար արարեալ զգունդն, որ առաջի
դրանցն³³ կայր, եւ զամենայն զաւրն ցիր
եւ ցան տուեալ, զբազումս սրախողխող ա-
րարեալ³⁴. եւ կալան զՄլեհ զդեմեսիլի-
ոսն³⁵, որ եւ մեռաւ ի Տաճկունսն³⁶:

18 ABCO T₁ եւ ծերացեալ արդ եւս: եւ
19 ABCO չիք գլուխ
20 AO (գլուխ) Ժ
21 O յաղագս վասն (պատերազմին)
22 CE չիք որ
23 C ի յամիթ
24 ABCDO (եւ) մահ
25 B կիւռ ժան D կիւռ ժանա
26 ABCDEO թագաւորի
27 O զվեհ գրեմեսիլիոսն
28 ACOT₁ (պաշարէ) գհաղաքն, մարտ եղեալ ընդ պա-
յիկսն, յորում էր (ապուրախապ թոռն համդունայ)
o համտունոյ T₂ չիք (պաշարէ) գհաղաքն մարտ ե-
ղեալ ընդ պայիկսն, յորում էր
29 ABCDEO ապուրախապ T₂ գԱրուրախապ
30 ABCDEO համդունոյ T₂ համտունայ o (համ)տ(ունոյ)
31 B եղակարծ (ժամու)
32 ADE յերիւարս
33 AC դրացն O դրանցն o դրացն
34 AC (սրախողխող) արարին
35 C գղէմէտիկոսն
36 ABCO ի տանկունս

3 Եւ ապա ի միւս ամին՝ ի ՆԻԳ թուականին¹ նիզակաւոր աստղն երեւեցաւ յաւուրս Հնձոցն, ի մուտս ամառնային եղանակին, ինքն յարեւելս² կալով եւ զնշոյլս լուսոյն նիզակածեւ յարեւմուտս³ ձգեալ⁴ ի վերայ աշխարհին Յունաց. եւ տեւեաց մինչեւ յաշնանային⁵ եղանակն:

4 Եւ ի նոյն ամի յելս մեռաւ Կիւոժան թագաւորն⁶ ի պաղատանն: 5 Եւ զկնի նորա, ի ՆԻԵ թուականին⁷ թագաւորեաց Վասիլ:

ԳԼՈՒԽ⁸ ԺԱ.⁹

Վասն թագաւորելոյն Սմբատայ¹⁰ որդւոյ Աշոտոյ¹¹, եւ շինելոյ¹² զպարիսպն Անւոյ¹³ Հանդերձ եկեղեցեան¹⁴, եւ գալոյն¹⁵ կիւրապաղատին Դաւթի¹⁶ ի Շիրակ¹⁷

1 Զայսու¹⁸ ժամանակաւ մեռաւ թագաւորն Հայոց՝ աւրհնեալն Աշոտ՝ ի ՆԻԶ թուականին¹⁹, եւ ի նոյն աւուր²⁰ թագաւորեաց Սմբատ²¹ որդի նորա ամս ԺԳ:

2 Սա²² լիւր արկեալ՝ պարսպափակ առնէ²³ զպարիսպն Անւոյ²⁴, յԱխուրեան²⁵ գետոյ մինչեւ²⁶ ցճորն Ծաղկոցաց, կրով եւ վիմաւք²⁷ մածուցեալ, մահարձանաւք եւ աշտարակաւք բրգանց²⁸, բարձրաբերձ պարսպեալ բացագոյն քան զհին պարիսպն յընդարձակութիւն քաղաքին, եւ մայրագերան դրամբք՝ երկաթագամ հաստահեղոյս բեւեռապինդ²⁹ ամրացուցեալ: 3 Արկանէ հիմն եւ մեծաչէն եկեղեցոյն ի նոյն քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ զկաթողիկոսարանին³⁰ եկեղեցին շինեաց յԱրգինայ³¹:

4 Եւ էր խաղաղութիւն եւ շինութիւն յաշխարհիս Հայոց: 5 Եւ սկսաւ նա գոռալ ընդ հաւրեղբաւր իւր³² Մուշեղայ, որ ի Կարս. եւ առնու զբերդն, որ ի Ճակատս³³, որում Շատիկն³⁴ կոչեն:

6 Յայսմ³⁵ պատճառէ կիւրապաղատն³⁶ Տայոց Դաւիթ ամենայն զաւրաւքն Վրաց խաղայ³⁷ ի վերայ Սմբատայ³⁸ եւ գայ իջանէ ի Շիրակ, ի գիւղն³⁹, որում Բաւաց ձորն կոչեն. ընդ նմա եւ Մուշեղ, որ կոչեացն գնա: 7 Եւ Սմբատայ⁴⁰ զամրոցն անդրէն ի ձեռս նոցա⁴¹ տուեալ՝ խաղաղութիւն հաստատեն, ոչ ինչ մեղուցեալ աշխարհին

1 BD չի՞ի (նիԳ) BD քվին CO քվականին
 2 AO յարևելս BD արևելս d յարևելս
 3 B արևմուտս
 4 A ձրգեալ
 5 A յաշնային a (յաշն(նային))
 6 BD չի՞ քագաւորն
 7 CO քվականին
 8 ABCD չի՞ գլուխ
 9 AO (գլուխ) ԺԱ.
 10 O սմպատայ BD սմբատա
 11 ABCO աշոտի
 12 B շինելոյն
 13 O անուոյ C անոյ
 14 BCDO եկեղեցան օ եկեղեցեան
 15 AO եւ գալն B ի գալն
 16 ABO Դաւթի կիւրապաղատի C եւ ի գալն դաւթի կ...ապաղ
 17 B ի շիրակն C չի՞ ի շիրակ
 18 C յայսու
 19 BD քվին CO քվականին
 20 ABDO (ի և ինոյն) օր BO (և) նոյն (օր)
 21 O սմպատ

22 A սայ (լիւր արկեալ)
 23 A պարսպական առնէ
 24 AO անուոյ
 25 A յա յախուրեան B ախուրեան
 26 A միչեւ
 27 C վիմովք D վիմովք T2 վիմով
 28 ABDO քրգանց C քրգայն
 29 B քեւեռապինտ
 30 A կաթուղիկոսարանին
 31 A յարգինաի BCO յարգինայի
 32 T2 իւր
 33 O ի նակատսն
 34 A շատիկ
 35 ABCO յայսր
 36 ABCD կիւրապաղատն
 37 C խաղաց
 38 B սմբատ O սմպատայ D սմբատա
 39 ACD ի գիւղն BE գեղն
 40 A սմպատա B սմբատա O սմպատայ
 41 O չի՞ նոցա օ նոցա

Սմբատայ¹, վասն զի խաղաղասէր եւ իրա-
ւարար էր կիւրապաղատն²:

ԳԼՈՒԽ³ ԺԲ⁴

Վասն գալոյ ամիրային Աբլհաճայ⁵ ի Հայս
եւ յետոյ բառնալոյ⁶ ի շխանութեան⁷ նորա,
եւ խեղդամահ⁸ լինելոյ նորա⁹

1 Բայց Մուշեղ ոչ ունէր զերկիւղն¹⁰
Աստուծոյ ի մտի, վասն զի բազմաբոյժ բո-
զիւք կեայր նա: 2 Եւ առաքեաց կոչեաց
զԱբլհաճայ Դեմաստանի¹¹, թոռն Սալա-
րին, ամիրայ¹² պարսիկ. որ թէ եւ ընդ նո-
սա ոչ ժամանեաց, այլ¹³ յետոյ եկեալ զՀո-
ռոմոսի վանքն¹⁴ այրեաց եւ զփրկական¹⁵
Նշանն¹⁶, որ ի վերայ սրբոյ Շողակաթի¹⁷
գմբէթին¹⁸ կանգնեալ էր, ճոպանաւք¹⁹ ի
վայր բերէր ի²⁰ ՆԼԱ թուականին²¹. եւ ի
վերայ նորա շարժեալ ցատումն Աստուծոյ՝
զիւրաբախ լինէր: 3 Եւ մարտուցեալ ընդ

ամիրային Գողթան²² Աբուտլիոյ²³ պար-
տեցաւ ի նմանէ. եւ կալանաւոր արարեալ
զնա՝ հանէ²⁴ ի նմանէ զԴուին եւ զամե-
նայն քաղաքս նորա: 4 Եւ նա թափառա-
կան շրջէր ամենայն ընտանեաւքն²⁵ իւ-
րովք յաշխարհիս Հայոց եւ Վրաց՝ պատ-
մելով, եթէ²⁶ «Վասն զի թշնամի եղէ իսա-
չին Քրիստոսի՝ եհան զիս յիմմէ²⁷ հայրե-
նեացն»: 5 Որ եւ երթեալ ի դուռն կայ-
սեր²⁸ Յունաց Վասլի, եւ ոչ ինչ աւգնա-
կանութիւն ի նմանէ գտեալ՝ դառնայ²⁹
անդրէն. եւ յիւրոց ծառայիցն խեղդամահ
լինի ի քաղաքին Ուխթեաց:

ԳԼՈՒԽ³⁰ ԺԳ³¹

Յաղագս կոտորածին³² Վասպուրականի եւ
ձերբակալ լինելոյ ի շխանացն ի ձեռն
Աբուտլիոյ³³ Գողթան ամիրային

1 Յայսմ ժամանակի Աբուտլուի³⁴ Գող-
թան ամիրայն Ջե հետեւակաժողով խազ-
կաւքն³⁵ գայ յաշխարհն Վասպուրականի:
2 Որոց ընդդէմ երթեալ ի շխանաց ի շխանն
Վասպուրականի ամենայն զաւրաւքն, ո-

1 O սմպատայ
2 ABCDE կիւրապաղատն O չիբ կիւրապաղատն o
կիւրապաղատն
3 ABCO չիբ գլուխ
4 AO (գլուխ) ժԲ
5 AB ապլիանայ C ապլիանոյ
6 ABCO բառնալ
7 B իշխանութիւն
8 AC խեղդամահն լինելոյ
9 ABC չիբ նորա
10 AB գերկիւղն
11 A գապլիանայ դիմաստանի B գապլիանայ գե-
մաստանի C գապլիանայ դիմաստանի O դիմաստի
12 BD ամիրա
13 A այդ
14 BD վանք d (վանք)ն
15 CE չիբ գփրկական
16 C եւ զնշանն
17 CE շողակաթին
18 A գմբէթին O կմբէթին
19 A նոպանաւք B նոպանաւ
20 ABCDE չիբ ի (ՆԼԱ)
21 BD բվին CO բվականին

22 ABEO (եւ մատուցեալ) ընդ ամիրայն գողթանի C
ընդ ամիրան գողթանի
23 ABCDEO T1 ապուտլիոյ
24 CE համ ամնայն
25 OT1 (եւ նա բափառական շրջէր) ընդ ամնայն աշ-
խարիս հայոց եւ վրաց. ամնայն ընդանեօֆն (T1
ընտանեօֆն) իւրով A ընտանեւն C ընտանեօֆն
ABCE չիբ իւրով
26 A եթե
27 BDO յիմ
28 BCDO կայսերն d կայսեր
29 DO դառնա
30 ABCO չիբ գլուխ
31 AO (գլուխ) ժգ
32 CE (կոտորածին) և
33 ABCD ապուտլիոյ
34 ABCD ապուտլուի
35 AD ջեհետաժողով CEO հետաժողով B ջեհտայ ժո-
ղով ADO խազկոֆն CE խազկանօֆն T1T2 հետեւա-
կաժողով խազկոֆն

րում Աբլխարիբն¹ կոչիւր, հրամանաւ Ա-
շոտոյ թագաւորի² Վասպուրականի, հան-
դերձ Գրիգորի³ իշխանաւ եւ Տիգրանաւ
մարզպանաւ⁴: 3 Եւ երթեալ իջաւանի⁵ ի
ձուաշ գաւառի, ի տեղին որ կոչի Բա-
կեար, պաճարարաւտ⁶ թողեալ զերիվարս⁷
իւրեանց:

4 Յորոց⁸ վերայ հասեալ տաճիկ զաւ-
րուն՝ առնուն զերիվարս⁹ նոցա. եւ նոքա
յամրոցին յարգելանի մնացեալ: 5 Առ որս
ըստ անաւրէն աւրինացն¹⁰ իւրեանց երդ-
մունս հաստատեալ տաճիկ զաւրուն՝ ասե-
լով եթէ¹¹ «Ոչ մեղիցուք ձեզ, միայն զզէնս
ձեր ցմեզ տուք, եւ դուք երթա՛յք խաղա-
ղութեամբ»: 6 Եւ նոքա յիմարեալ¹² ան-
միտ մտաւք¹³ ետուն¹⁴ ցնոսա զզէնս իւ-
րեանց: 7 Եւ նոցա ստեալ երդմանցն ըստ
հեթանոսական դենին՝ սրախողխող առ-
նէին¹⁵ զամենեսեան, ձերբակալ արարեալ
զԱբլխարիբ¹⁶ եւ զերկուս¹⁷ իշխանսն՝
զԳրիգոր եւ զՏիգրան մարզպան, որք
զանձիւ փրկեցան¹⁸:

8 Իսկ յայն մեռեալ մարմինս¹⁹ գտան
նշանք²⁰ հեթանոսական պղծութեան, զոր

չէ աւրէն ասել. վասն որոյ մատնեաց զնո-
սա Աստուած ալլազգեացն²¹, ի ՆԼԲ թուա-
կանին²²:

ԳԼՈՒԽ²³ ԺԴ²⁴

Յաղագս թագաւորելոյն²⁵ Վասլի Յունաց²⁶,
եւ բունակալութեանն Վարդայ, եւ աւերա-
ծոյ²⁷ աշխարհին Յունաց

1 Եւ իբրեւ թագաւորեաց Վասլի ի ՆԻԵ
թուականին²⁸, որպէս յառաջն²⁹ ասացաք՝
Վարդ, որ ըստ աւելաճայնութեան³⁰ Սիկ-
լառոս³¹ կոչիւր, ապստամբեալ³² թագաւո-
րեաց ի կողմանս Ջահանայ³³ եւ Մելտե-
նոյ³⁴, որ էր³⁵ այր քաջ եւ կորովի ի գործ
պատերազմաց: 2 Եւ միաբանեալ ընդ ին-
քեան զհեծելազունդ զաւրն Հայոց, որ
ընդ Յունաց թագաւորութեամբն, եւ բա-
ժանեալ³⁶ զթագաւորութիւնն Յունաց՝ հա-
սանէ մինչեւ ցԲիւթանիա³⁷, ճակատ տա-
լով ընդ թագաւորին Վասլի զամս Դ. եւ
արեան ճապաղիւք³⁸ լնուին զաշխարհն ա-
մենայն:

1 ABDE ապլխարիբն C մապլխարիբն O ապլխա-
րիպն
2 B թագաւորին
3 ACE գրիգորի
4 B պարզպանաւ b մարզպանաւ C եւ (մարզպա-
նաւ)
5 ACE իջաւանի T1 իջեւանի T2 իջեւանի
6 A պանար արաւտ O պանար արօտ
7 ABDE զերիվարս
8 ABDEO յորոյ C որոյ
9 ABCE զերիւարս
10 BD անօրինացն
11 A եթե
12 O յիմարեալք
13 O մտով
14 B ետունս
15 A առնեին
16 ABD գապլխարիպ CO գապլխարիպ
17 C գլ. Բ ս(իշխանսն) BD գԲ O գ.Բ
18 A (մարզպան) եւ քաղաք գանձիւ փրկեցան ABD
չի՛ր որք BD քաղաքն
19 C մարմինն O մարմինսն
20 ABCO գրտաւ նշան

21 C ալլազգացն
22 CO թվականին BD թվին
23 ABCO չի՛ր գլուխ
24 AO (գլուխ) ԺԴ
25 ACEO թագաւորութեանն B թագաւորութեան
26 ABCO չի՛ր յունաց
27 ABCDO աւերածի
28 BD թվին CO թվականին
29 C առաջն
30 AC ըստ աւելաճայնութեանն
31 B սիկլառոս
32 A ապստամբեալ
33 A ի կողմանայ a (ի կողման)ս ջահան(այ)
34 AC մելտենոյ O մելտինոյ
35 A զի էր BD գոր (էր) d T2 որ (էր)
36 A բաժանեալ
37 BCDO մինչեւ ցբիւթանիայ
38 (ABCO մապաղիւք) DE մապաղիւք նշի՛ր մապաղիւք
ն.ն. մապաղիւք

3 Վասն զի թագաւորն Վասիլ գումարեաց զգաւրսն¹ Բիւզանդիոնի եւ զԹրակացին եւ զՄակեդոնացին Հանդերձ ամենայն² արեւմտեայ³ ազգաւքն, առաքէ ի⁴ պատերազմ ընդդէմ Վարդայ⁵ բռնակալին⁶: 4 Իսկ Վարդայ⁷ զինեալ ընդդէմ նորա⁸ ի պատերազմ, յորում քաջապէս մարտոցեալ զաւրն Հայոց, որպէս որդիք իշխանին Տարաւնոյ, Գրիգոր⁹ եւ Բագարատ¹⁰, եւ Զափրանիկ¹¹ իշխան Մոկացի, ահաբեկ արարեալ զգաւրսն Յունաց՝ զաւրէն փոթորկեալ¹² մրրկի շփոթէին, զյուրվս սրախողխող արարեալ եւ զբազումս ձերբակալ¹³. ուր սպանեալ եղեւ ներքինին¹⁴ Պետռանոս՝ զլուխ զաւրուն: 5 Եւ ապա ողորմածաբար¹⁵ գթացեալ յաղագս քրիստոսական հաւատոցն՝ մնացելոցն կեանս շնորհէին:

6 Եւ այսպէս երկիցս եւ երիցս եւ բազում անգամ մարտոցեալք՝ յաղթեցին արեւմտեայ¹⁶ զաւրուն. եւ գրեթէ¹⁷ ընդ բոլոր աշխարհն Յունաց տարածեցաւ պատերազմն, մինչ զի¹⁸ գեւղ¹⁹ ընդ գեւղ եւ քաղաք ընդ քաղաք մարտնչէր, եւ ամենայն ուրեք²⁰ արեանց հեղմունք լինէին: 7 Եւ

սով սաստիկ յընդհանուր աշխարհս²¹ տարածանէր²², եւ դիակունք մեռեալք²³ ի ճանապարհս եւ ի գոհս բազմանային, եւ կենդանիքն ողորմելի քան զմեռեալս շրջէին, եւ գայլք գիշիչք²⁴ ի մարմինս մեռելոցն խանձեալք՝ եւ զկենդանիսն ուտէին²⁵:

8 Եւ մինչ զայսու²⁶ շփոթմամբ էր թագաւորութիւնն Յունաց, Խլաթայ եւ Նփրկերտոյ ամիրայն Բատն վերստին շինէ զքաղաքն Մանագկերտ եւ սրով եւ գերութեամբ անմարդացոյց զգաւառն Տարաւնոյ, յաւարի առեալ զքաղաքն Մուշ, խողխողեալ զքահանայս²⁷ յեկեղեցւոջն, որ սուրբ Փրկիչ անուանի՝ ողորմելի տեսակաւ. յորում²⁸ արեան ներկուածք²⁹ ցարդ եւս ցուցանին³⁰ ի նոյն յեկեղեցւոջ³¹:

ԳԼՈՒԽ³² ԺԵ³³

Վասն վերջին պատերազմին Յունաց, եւ փախստական լինելոյ բռնակալին Վարդայ

1 Եւ ապա³⁴ յետ այսր ամենայնի անցից անցելոց՝ Վասիլ թագաւորն³⁵ Յունաց³⁶ գթոռնիկ զաւրավարն, որ էր յազգէն Վրաց, աբեղայ ի սուրբ լերինն, հանեալ

1 A գգօրս
 2 O չի՛ր ամենայն
 3 ABCDO արեւմտեայ
 4 A չի՛ր ի
 5 BD վարդայ
 6 AC բռնակալի
 7 BCD վարդայ
 8 B (ընդդէմ) նոցա
 9 ABCDEO գրիգորի
 10 B բագարատայ
 11 BDO ափրանիկ do գ(ափրանիկ)
 12 ACD թոփորկեալ d փոթորկեալ
 13 ABCO ձերբակալս
 14 BCD ներքինին
 15 ABCDO ողորմաբար T2 ողորմածաբար
 16 ABCD արեւմտեայ
 17 A գրեթէ BCDO գրեթէ
 18 O մինչեւ (գիւղ) o մինչ զի
 19 A գեւղ ընդ գեւղ O գիւղ ընդ գիւղ T2 գեղ ընդ գեղ
 20 BCD ուրեք

21 ABCE ընդհանուր յաշխարհս O ընդհանուր աշխարհս
 22 BDO տարածեցաւ o տարածանէր
 23 C մեռելք
 24 BDO գիշերիչք (ACbdo գիշիչք) T2 գիշատիչք
 25 A ուտելին
 26 ABCDEO գայս (d գայս)ու
 27 AC գփահանայսն
 28 ABCDO որում
 29 B ներկուածքն
 30 ABCO ցուցանին
 31 ABCO եկեղեցւոջ
 32 ABCO չի՛ր գլուխ
 33 AO (գլուխ) ժե
 34 B եւ արդ
 35 C թագաւորին
 36 C չի՛ր հունաց

առաքէ առ¹ կիրապաղատն² Տայոց³ Դա-
 ւիթ. եւ խոստանայ⁴ տալ նմա զԽաղտոյա-
 ռիծ⁵ Կղէսուրաւն⁶, զՉորմայրի եւ զԿա-
 րին, զԲասեան եւ զՍեւուկ բերդակ⁷, որ է⁸
 Մարդաղի, զՀարք եւ Ապահունիս⁹,
 (զորս¹⁰ եւ ետ իսկ) որպէս զի զաւր առա-
 քեսցէ յաւգնականութիւն նմա:

2 Եւ կիրապաղատին¹¹ Դաւթի գումա-
 րեալ զգաւրսն Վրաց, եւ զիշխանաց իշ-
 խանն զՋոշիկ տայ զկնի Թոռնկայ՝ պատե-
 րազմել ընդ Վարդայ¹² բռնակալին¹³:

3 Որք սկսեալ ի Տայոց աշխարհէն՝ քան-
 դեալ աւերեցին զամենայն աշխարհն Յու-
 նաց, որ ընդ ձեռամբ բռնակալին էր¹⁴:

4 Նոյնպէս եւ հանեալ թագաւորին ի բան-
 տէ զՎարդ, որ եւ Փոկասն¹⁵ կոչիւր, զոր
 արկեալ էր Կիւռ-ժանայ ի կղզի՝ եւ տայ ի
 ձեռս զամենայն արեւմտեայ¹⁶ զաւրն Յու-
 նաց եւ հանդերձ Վրաց զաւրուն¹⁷ առաքէ
 ի վերայ բռնակալին Վարդայ երկուս¹⁸
 բանակս:

5 Իսկ բռնակալին¹⁹ ընդ միոյ բանակին
 մարտուցեալ, այն ինչ ի փախուստ դար-
 ձուցանէր, եւ ահա²⁰ հասեալ ի վերայ երկ-
 րորդ բանակին՝ նորոգապէս յարդարէին²¹

զպատերազմն: 6 Յորմէ զանգիտեալ
 բռնակալին²² Վարդայ՝ փախստեայ²³ լի-
 նէր:

7 Եւ ելեալ յաշխարհէն Յունաց՝ թի-
 կունս աւգնականի կալեալ զամիրայն
 Բաղդատայ²⁴, որ իբն խոսրովն²⁵ կոչիւր,
 զի եւ յառաջն²⁶ իսկ բարեկամացեալ էր
 ընդ նմա: 8 Եւ երթեալ հասանէ մերձ առ
 քաղաք²⁷ նորա ի Մարտիրոսաց պոլիս²⁸ որ
 է Նփրկերտ, ի տեղին որ Փշփաշն կոչի²⁹:

9 Իսկ թագաւորն Վասիլ հրեշտակ խաղա-
 ղութեան առաքեալ զկնի՝ դառնալ անդ-
 րէն թագաւոր Վարդ³⁰: 10 Ջոր իմացեալ
 աւագ հեծպացն իբն խոսրովու³¹ զգացու-
 ցանեն նմա ի Բաղդատ³²: 11 Եւ նորա
 հրաման տուեալ՝ ունել զթագաւորն, եթէ³³
 հնար լիցի: 12 Եւ նոքա յանկարծ յեղա-
 կարծ ժամու ի վերայ հասեալ՝ ձերբակալ
 արարեալ զթագաւորն Վարդ հանդերձ մե-
 ծամեծաւքն³⁴ հասուցանեն ի դուռն իբն
 խոսրովու³⁵, ի քաղաքն Բաղդատ³⁶, որ է
 Բաբելոն³⁷: 13 Ջոր հրամայեաց երկաթե-
 ղէն կապանաւք ի բանտի³⁸ պահել զամե-
 նայն աւուրս կենաց իւրոց իբն խոսրով³⁹:

1 A էառ (կիրոպաղատն)
 2 ABCO կիրոպաղատն
 3 BDO չի՛ տայոց od տայոց
 4 C խոստանա
 5 A գխախտոյաոիմ O գխաղտոյաոիմն
 6 B կղէսուրօն
 7 C սեւուքերդակ
 8 ABCDO որ և
 9 ABT1 գապահունիս CO գապահունի՛
 10 ABCDO գոր
 11 ABCO կիրոպաղատին
 12 BDE վարդա
 13 AC բռնակալի
 14 ABDO չի՛ էր o էր
 15 BD փոկաս
 16 ABD արեւմտեա
 17 D (հանդերձ) գորուն վրաց d վրաց գորուն
 18 A երկու BDO Բ C Բ.ս
 19 AC բռնակալի
 20 ABCO և ապա փիս և ահա
 21 AB յորդորեին CO յորդորէին

22 C քոնաւորին
 23 ABO փախստեա (լիւնէր)
 24 AB բաղդատայ
 25 ABCDEO իպն խոսրովն
 26 A զի զի յոաջ իսկ CE յառաջ իսկ
 27 O առ քաղաքն
 28 A մարտիրոսաց պաւղիս C մարտիրոսոյ պօլիս O
 մարտիրոսացն պօլիս
 29 CO կոչիւր
 30 T2 թագաւորին Վարդայ
 31 ABCDO իպն խոսրովու
 32 A ի բաղդատ
 33 A եթե
 34 B մեծամեծօք
 35 ABCO իպն խոսրովայ
 36 A բաղդատ
 37 AB բաբել CO բաբել
 38 O ի բանդի B ի բանտ D ի բանդ d (ի բանդ)ի
 39 ABCO իպն խոսրով

ԳԼՈՒԽ¹ ԺԶ²

Յաղագս ամիրայութեանն³ Իբն Խոսրովու⁴
եւ իմաստութեան նորա

1 Այս Իբն Խոսրով⁵ խոհական⁶ իմաստիւք հանգոյն Աղեքսանդրի գտեալ՝ զարմացոյց զաշխարհս. հրամանաւք զքաղաքս առնոյր եւ բանիւ ի դղեակ բերդիցն⁷ հալածէր զբնակիչսն⁸: 2 Որ եւ ընդ քաղաքի միոյ մարտուցեալ՝ ոչ հաւանէին բնակիչքն⁹ տալ ի ձեռս նորա. եւ խնդրեալ ի նոցանէ հնազանդութեան աղազաւ հարկատրիլ յիւրաքանչիւր տանէ¹⁰ շուն մի, (եւ էր քաղաքն¹¹ յեզերս եղեգնաբոյս շամբի¹², եւ ամենայն բնակութիւն¹³ նոցա եղեգամբ պատրաստեալ), եւ առեալ զշունսն զամենայն՝ հրամայեաց նաւթ¹⁴ եւ հուր մատուցանել ի նոսա¹⁵ եւ արձակել: 3 Եւ նոքա դիմեալ յիւրաքանչիւր¹⁶ բնակութիւնս ընդ խողովակ պարսպին՝ հրով տոչորեցին զամենայն քաղաքն:

4 Այս գործ իմաստութեան սորա հանգոյն ցուցաւ Սամփսոնի, որ¹⁷ չորեք հարիւր¹⁸ աղուեսաւքն զոճ ալազգեացն¹⁹

հրդեհեաց, կամ Աղեքսանդրի²⁰, որ թռչնաւքն զփայտակերտ ապարանսն ի վերայ բարձր դիտանոցի²¹ վիմին ելոյց²²:

5 Ի սմանէ զարհուրեալ մեծ ազգն Համտունայ²³, որ էին²⁴ բնակեալ ի դաշտին Ասորոց²⁵ թողին զամուր քաղաքս իւրեանց՝ զնփրկերտ, զԱմիթ, զԱզրուն²⁶ եւ զայլն ամենայն, փախստեայ²⁷ դնացին յաշխարհն Յունաց: 6 Եւ հրամանաւ Վասուլի դարձեալ բնակեցան ի Հալպ²⁸, մինչեւ սպառեալ վճարեցան²⁹ մահուամբ:

7 Այս Իբն Խոսրով³⁰ մեծարեալ պատուէր զքրիստոնեայս, մինչեւ զամենայն տաւնս³¹ տէրունականս համարձակապէս կատարել յաշխարհի նորա: 8 Այլ եւ ինքն իսկ ի գալուստ³² Փրկչին ի տաճարն, որ Տեառնընդառաջ³³ կոչի՝ պայծառաբորբոք ջահիւք եւ մոմեղինաւք³⁴ եւ բազմակոյտ վշով զլուցմունսն³⁵ կատարեաց: 9 Այլ³⁶ եւ զաղաւնեացն նաւթիւ³⁷ եւ հրով զթեւս³⁸ պայծառացոյց, եւ ընդ երկինս առաքէր³⁹:

10 Սա թագ եղեալ թագաւոր թագաւորաց կոչեցաւ, զոր ոչ էր աւրէն Տաճկաց զարմին: 11 Եւ սպիտակափայլ արծաթ հրամա-

1 ABCO չի՛ գլուխ
2 AO (գլուխ) ԺԶ
3 ACO ամիրայութեանն
4 ABC իպն խոսրովայ DO իպն խոսրովու
5 ABCO իպն խոսրով
6 C խորհական
7 T2 ի դղեակ բերդից
8 O գրնակիչքն օ բնակիչսն
9 O չի՛ որ եւ ընդ քաղաքի միոյ մարտուցեալ ոչ հաւանէին բնակիչքն
10 B չի՛ տանէ
11 D քաղաքն (քաղաք)ն
12 AB շամբից O շամբիոյ օ շամբիոյ CE շամբից
13 AO բնակչութեան C բնակչաց
14 A մաւթ CE մօթ
15 O մոցա
16 B իւրաքանչիւր
17 ABCO չի՛ որ
18 AC չորբի արիւր
19 A պալազգեացն D պալազգեաց d (պալազգեաց)ն

20 BCO աղեքսանդրի
21 BDTi բարձրադիտանոցի
22 C ելոյց
23 ABCO համտունայ օ համտունայ
24 A եին
25 C ասորոց
26 ACO զգարունն
27 ABC փախտեա
28 A ի յալպ
29 B վնարեցաւ
30 ABCDO իպն խոսրով
31 A տաւնս BCE տօն
32 ACE զգալուստ փի/ս ի գալուստ
33 BD տեառն ընդ յառաջ O տեառն ընդառաջ T1T2 տեառն-ընդ-առաջ
34 AC մոմեղինով
35 A զլուցմունսն BD զլուցմունսն CE զլուծմունսն T1 զլուացմունսն R զլուցմունսն (էջ 137, ծմ. 2) նԲ.Ն. լուացումն փի/ս լուցումն
36 A պլ
37 CE մօթիւ
38 ABCEO գրեւսն B գրեւսն
39 A ընդ յերկինս առաքեալ

յեաց ընդ պղնձոյ եւ ընդ կապարոյ խառնել¹, որ ի չընտրել վաճառականացն²՝ գանունն իւր ի վերայ խեցոյ³ եւ կամ⁴ կաշւոյ հրամայեաց գրել եւ տալ ի ձեռս ոմանց, զի գնեսցեն⁵ այնու կերակուր կամ հանդերձ. եւ ոչ ոք⁶ իշխեաց ընդգրիմանալ:

ԳԼՈՒԽ⁷ ԺԷ⁸

Յաղագս թագաւորութեան⁹ Աբասայ¹⁰ ի Կարս, եւ բարեգործութեանցն նորա¹¹, եւ¹² շինելոյ զՇիրիման վանս¹³ անուամբ իւրով¹⁴

1 Յայսմ ժամանակի, ի ՆԼԳ թուակառնին¹⁵ Մուշեղ՝ թագաւորն մայրաքաղաքին Կարուց վախճանի¹⁶, եւ փոխանակ նորա թագաւորէ¹⁷ Աբաս որդի նորա ամս Զ:
2 Սա յառաջ քան զթագաւորելն էր մանուկ փոյթ եւ կայտառ, եւ կարծիս տայր տեսողացն՝ անհաղորդ լինել բարեաց ինչ գործոց հոգեւորաց: 3 Իսկ յորժամ եհաս նա յաթոռ թագաւորութեանն¹⁸, երեւեցաւ

նա այր շքեղ, լի հանճարով եւ իմաստուն, ընդ առաջին¹⁹ իմաստունս²⁰ համարեալ, եւ դարձաւ նա յայր այլ²¹:

4 Եւ սկիզբն արարեալ²² ամենայն բարեգործութեանց՝ նախ եւ առաջին եբարձ նա յաշխարհէն իւրմէ զաւագակուծիւն, զմարդադաւուծիւն, զոր ազգն Վանանդայ²³ իբրեւ զհայրենիք ունէին, ըստ ասելոյ պատմագրին: 5 Եւ յաւուրս հաւր սորա ոչ միայն ի ճանապարհս եւ ի բացեայ²⁴ տեղիսն կողոպտէին, այլ ի նոյն ինքն ի քաղաքին՝ յերեկոյացեալ ժամուն եւ զգիշերն ամենայն ճիչք եւ ձայնք կողոպտանաց լինէին²⁵: 6 Այլ²⁶ սա ինքնին վրէժխնդիր եղեալ եւ զգտեալ զողսն՝ անաչառ մահու դատապարտեալ՝ ոչ խնայելով ի մեծս կամ ի փոքունս, յիշխանս կամ ի շինականս²⁷. եւ այնպէս խաղաղացոյց զաշխարհն իւր՝ մինչ զի ի գիշերի իբրեւ ի տուրնջեան²⁸, եւ յանապատի իբրեւ յապարանս շրջէին²⁹ ամենեքեան՝ շինութեան եւ աշխատաժիր գործոց պարապեալք³⁰, արդարադատ իրաւամբք³¹ ուղղեալք:

7 Նա եւ որ սովորութեամբ անկարգութիւն էր յաշխարհիս³² Հայոց՝ իշխանաց եւ ազատաց որովայնամոլութեամբ ապականել զկարգեալ աւուրս պահոց, զչորեքշաբաթ³³, զուրբաթ եւ զաւուրս շաբաթոց,

1 ABO T₁ եւ սպիտակափայլ արծաթ հրամայեաց ընդ պղնձոյ (BO պղնձոյ) եւ ընդ կապարաց (BOT₁ ընդ կապարոյ) խառնել T₂ եւ գսպիտակափայլ արծաթ ընդ պղնձոյ եւ ընդ կապարոյ հրամայեաց խառնել
2 T₁ որ ոչ ընտրել վաճառականացն եւ (գանունն իւր)
3 ABCDE խեցոյ
4 ABCD չի՛բ եւ (կամ)
5 A գրեմեսցեն
6 A և գո՛բ (իշխեաց) փ/ս ոչ ո՛բ
7 ABCO չի՛բ գրուխ
8 AO (գրուխ) ժէ
9 ACO թագաւորութեանն
10 O արասա
11 ABCDO չի՛բ եւ բարեգործութեանցն նորա
12 (ACE գշիրիման) T₁T₂ գշիրիման
13 A վանս C (գշիրիման) վանս BD վանս
14 BD անուան իւրոյ
15 BO թվականին, ՊՆ. մշտապէս C-ում գրուած է թվական, որն այլևս չի նշուելու:
16 O վաղնանի
17 ACE թագաւորեաց
18 Bd թագաւորութեան

19 B ընդ յառաջին
20 ABDEO իմաստունսն
21 A յայր յայդ BCDO յայր յայլ
22 ACE սկիզբն արար
23 BD վանանդա C վանանդացի
24 ABC ի բացեա տեղիսն
25 A լինելին
26 A այլ
27 B յիշխանականս փ/ս շինականս D իշխանականս
28 T₂ ի տունջեան
29 A շրջելին
30 ABO T₁ (շինութեան) և աշխատաժիր գործոց պարապեալ T₂ շինութեան եւ աշխատութեան գործոց պարապելին
31 C իրաւամբ
32 B աշխարհիս
33 O գշորեք շաբաթն C գ՛ր շր

բաց ի մտոյ կլթեղէն կերակրովք՝ յայնմ՝ անձամբ աւրինակ եղեալ² ո՛չ ի կլթեղինաց ինչ եւ ո՛չ ի ձկանց ճաշակեալ, եւ հացիւ եւ բանջարեղէն մրգաւք անցուցանէր գաւուրսն զայնոսիկ³ զաւրինաւորեալս⁴ կանոնիւ:

8 Եւ ապա խորհուրդ բարի⁵ կայեալ յանձին⁶ շինել վանս ի փրկանս անձին իւրոյ եւ ի⁷ յիշատակ հոգևոյ յաւիտենական: 9 Եւ ընտրեաց տեղի ընտրանաւ ի գլուխս Արշարունեաց գաւառին, որում Շիրիմսն⁸ կոչիւր. եւ ընդարձակագոյն պարսպեալ որձաքար վիմաւք, չորեքկուսի ձեւով, յիւրոց գանձուցն⁹ մեծածախ աշխատութեամբ յարգարեալ զամենայն շինուածսն¹⁰ պիտոյից ի¹¹ բնակութիւն կրանաւորաց: 10 Եւ ըստ հռչակաւոր տեղւոյն կացուցանէ առաջնորդ ուխտին զայրն Աստուծոյ զՄովսէս, ընտիր երեւեալ յամենայն աշխարհիս¹² Հայոց: 11 Զի էին¹³ սոքա արք երեք¹⁴ Մովսէս եւ Յովհաննէս եւ Ամղիքոս¹⁵ եղբարք ըստ մարմնոյ, եւս առաւել հոգևով միասնունդք¹⁶, միակրանք ի կարգս Աստուծոյ: 12 Յորս էր մի հոգի եւ անձն եւ բնութիւն շնչակապութեան յերիս անձինս բնակեալ՝ երիւք խոստովանութեամբ զերրորդութիւնն¹⁷ սուրբ փառաւորել բարեպաշտութեամբ, եւ երիւք առաքինութեամբ

պայծառացեալ՝ գործելով եւ պահելով եւ աղաւթիւք: 13 Եւ այսպէս կեցեալ առաքինութեամբ եւ բարի անուամբ՝ ի միում ամի վախճանեցան¹⁸ ի ՆԾԱ թուականին:

14 Իսկ մայր թագաւորին Աբասայ, բարեպաշտուհի ի բարեպաշտ ծնողաց¹⁹, որ էր քոյր թագաւորացն Փառխոսոյ Սենեքերիմայ եւ Գրիգորի²⁰, ի բաց ընկեցեալ զերկրաւոր պսակն եւ²¹ յոչինչ համարեալ զփառս անցաւորս՝ ընթանայր զհետ²² երկնաւորին: 15 Զվարս կրանաւորութեան յանձն առեալ՝ երթեալ բնակէ ի տեղին, որ թրին վանք անուանի²³, (գի են²⁴ եկեղեցիք փորածոյ ի սպիտակ քարի ընդդէմ հարաւոյ). եւ աղաւթից եւ գործոց բարեաց պարապեալ եւ հոգեւոր առաքինութեան:

ԳԼՈՒԽ ²⁵ ԺԸ ²⁶

Թէ²⁷ ո՛րպէս եկն Աբլհաճ²⁸ որդին Ռովդայ²⁹ ի Դուին քաղաք եւ հարկս ի Հայոց առեալ՝ դարձաւ

1 Իսկ ի ՆԼԶ թուականին Աբլհաճ³⁰ որդին Ռովդայ³¹, ամիրայ³² Ատրպատականի, ճ՛Ռ³³ պարսիկ զաւրու գայ ի վերայ Աբուտլփոյ³⁴, հանէ ի նմանէ զքաղաքսն

1 ABCDO գայն
2 O օրինակեալ
3 C գայսոսիկ
4 B գորինաւորեալ
5 ABC բարւոյ O բարեաց
6 BD (յանձին) իւրոյ
7 ABCDO չի՛ր ի
8 (ABCO շիրիմսն) T₂ Շիրիմն
9 ACE գանձուց
10 ABCO շինուածն
11 ABCDEO չի՛ր ի (բնակութիւն) d ի
12 B յաշխարհիս
13 A էին
14 ABCDEO Գ
15 (ABCDEO ամղիքոս) T₂ Յամղիքոս
16 O սընունդի
17 BD գերրորդութիւն d (գերրորդութիւն)ն

18 O վաղնամեցան BD Թվին
19 BCEO ծնողաց
20 ACO գրիգորոյ
21 BD չի՛ր եւ
22 A ըզհետ
23 T₂ կոչի
24 C չի՛ր են
25 ABCO չի՛ր գլուխ
26 AO (գլուխ) ԺԸ
27 A Թե
28 AO ապիւհանայ ABDO ընովանդիկ C ապիւհանա ընովանդի
29 ABCDO չի՛ր որդին ուովդայ C ընովանդի
30 ACD ապիւհանա BO ապիւհանայ
31 ABCO որդի ուովդայ
32 ACD ամիրայ
33 A հարիւր հազար
34 A (ի վերայ) ապուտլփու BCO ապուտլփոյ

Սալարին. յաւարի առեալ զաշխարհն նորա զԳողթն՝ գայ հասանէ ի Դուին քաղաք եւ¹ առնու զնա, խնդրէ² հարկս³ զանցեալ ամացն ի Հայոց. զոր ընդդէմ յուղարկեալ զհարկսն թագաւորն Սմբատ մեծամեծ ընչիւք՝ դարձոյց:

ԳԼՈՒԽ⁴ ԺԹ⁵

Դարձեալ եկն⁶ Աբլհաճայ⁷ յաշխարհն Վասպուրականի, եւ մահ⁸ նորին. եւ ամիրայանալ⁹ Մամլանայ՝ որդւոյ նորա

1 Դարձեալ ի ՆԼԷ թուականին¹⁰ բորբոքեցաւ Աբլհաճ Ռովղայ¹¹ ցասամբ մեծաւ ի վերայ աշխարհին Վասպուրականի յայսպիսւոյ¹² պատճառէ: 2 Վասն զի որդի Ալեւորին¹³ Հերայ հատուածի պատճառաւ անցանէ յամիրայն¹⁴ Ապահունեաց. եւ ի կրկին անդրէն դառնալն, յորժամ մերձ եղեալ¹⁵ ի սահմանսն Հերայ, անցանէին ընդ գեւղ¹⁶ ինչ, տեսանէին¹⁷ զմանկունս քրիստոնեայս գեղեցիկս ի խաղու. եւ գայլաբար արշաւեալ՝ բառնան յերիվարս¹⁸ իւրեանց եւ ի փախուստ մտանեն¹⁹: 3 Զոր

տեսեալ ազատ ոմն ի հաւատացելոց²⁰, Սարգիս անուն, յերիվար²¹ հեծեալ՝ զհետ ընթանայր. «Զի՞ եւ զի՞ առնէք զայդ²²» ասէր: 4 Եւ նոքա դարձեալ՝ թշնամանս զնէին նմա: 5 Եւ նա զպողոպատիկ սուրն քաջապէս շահատակեալ²³ արեամբ նոցա արբուցանէր՝ զամենեսեան սատակելով, միջակտուր արարեալ զորդի Ալեւորին՝ դարձուցանէր զմանկունսն գերեալս²⁴:

6 Եւ Ալեւորն Հերայ առաքէ առ ամիրայն Ատրպատականի Աբլհաճ²⁵, տալ ցնա²⁶ խոստանայր զքաղաքն Հեր²⁷, միայն թէ²⁸ զվրէժ²⁹ արեան որդւոյ նորա խնդրեսցէ յաշխարհէն Վասպուրականի: 7 Եւ նորա յանձն առեալ, ի բազմութիւն զաւրացն վստահանալով՝ անմարդացուցանել խոստանայր զաշխարհն ամենայն: 8 Եւ ժողովեալ զբազմութիւն խուժադուժացն Պարսից՝ գայ հասանէ ի մուտս սահմանացն Վասպուրականի: 9 Յերիս յառաջս³⁰ զզաւրսն³¹ բաժանելով յերեկոյացեալ ժամուն. զի առ վաղիւն գունդ բանակին միոյ ընդ աջակողմսն³² սփռեալ ընդ եզերս աշխարհին, եւ մինն՝ ընդ ահեկեայսն³³, եւ ինքն բանակաւ մեծաւ զմիջոց³⁴ աշխարհին կալցէ, զի մի ոք կարացցէ ապրել ի քրիստոնէիցն:

10 Զայս խորհեալ եւ խաւսեցեալ ընդ զաւրս իւր ի մուտս արեւուն: 11 Իսկ ի գի-

1 B չի՞բ եւ (առնու)
2 T₂ եւ (խնդրէ)
3 O հարկսն
4 ABCO չի՞բ գլուխ
5 AO (գլուխ) ԺԹ
6 ABCDO (դարձեալ) ելն փիս եկն
7 ABO ապլիանայ C ապլիանոյ
8 ABC (մահ) նորա O մահն նորա
9 AO ամիրայանալն B ամիրանալ
10 BD չի՞բ ի ՆԼԷ թուականին d ի ՆԼԷ թուականին CO չի՞բ ի (ՆԼԷ)
11 ACO ապլիանայ ոռվադիկ B ոռվարիկ
12 A յայսպիսու BCO յայսպիսույ
13 C ալեորին
14 C յամիրան
15 ABCDO մերձ եղեալ
16 O գիւղ T₂ գեղ
17 A տեսանեին
18 A յերիւարս
19 ABCO ի փախուստ մտեալ

20 A ազատ ոմն ի հաւատացելոց C ի հաւատացելոց ազատ ոմն O ի հաւատացելոցն ազատ ոմն
21 C յերիվարի հեծեալ
22 C չի՞բ գայդ
23 AD շահատեալ d (շահատ)կ(եալ)
24 D գերեալ
25 AB ապլիանա CO ապլիանայ
26 BD (տալ) նմա
27 ACO հէր
28 ACO (միայն) եթէ
29 A զվրէժ
30 ABCDEO (յերիս) առաջս
31 B գորբն
32 (BCDO ընդ աջակողմսն) T₂ ընդ աջակողմն
33 AC ընդ յահեկայսն BO ընդ ահեկայսն
34 O զմիջոցն

չերին յայնմ ասացաւ առ նա բան Փրկչին. «Անմիտ եթէ¹ յայսմ գիշերի ոգիդ² ի բաց պահանջի, իսկ այդ խորհուրդ ամբարհաւածութեան³ մտացդ զիա՞րդ կատարեսցի»:

12 Եւ ի վաղիւն գտաւ մեռեալ, եւ խափանեցաւ խորհուրդ չարութեան նորա:
13 Եւ յետ մահուան նորա առնու գիշխանութիւնն Մամլան՝ որդի նորա: 14 Իսկ Աբուտուփ⁴ Գողթան ամիրայն⁵, միւսանգամ տիրէ Դունայ⁶ եւ երդմունս դաշանց հաստատէ թագաւորն Հայոց Սմբատ⁷ ընդ նմա, միջնորդութեամբ Տեառն⁸ Խաչկայ՝ խաղաղութեամբ կեալ առ միմեանս⁹:

ԳԼՈՒԽ¹⁰ Ի¹¹

Յաղագս անցուցանելոյ թագաւորին¹² Վասլի ի ժողովրդէս¹³ Հայոց յաշխարհն Մակեդոնացւոց¹⁴. եւ հալածանք ի ձեռն մետրապալաւտին¹⁵ Սեբաստիոյ¹⁶

1 Այլ¹⁷ յորժամ էր ի Բաղդատ¹⁸ թագաւորն Վարդ, եւ խաղաղանայր թագաւորութիւն¹⁹ Վասլին²⁰, կամեցաւ յագգէն

Հայոց, որ ընդ իւրով թագաւորութեամբն, անցուցանել ի Մակեդոնիա²¹ ընդդէմ Բուլղարացն, զի շինեսցեն զերկիրն: 2 Որ եւ²² տարեալ²³ բնակեցոյց²⁴ գյուղիս յաշխարհն յայն: 3 Եւ կանացի հովիւքն եւ մետրապալաւտն Սեբաստիոյ²⁵ սկսան նեղել զագգն Հայոց վասն հաւատոյ. եւ զբռնութիւն ի ձեռն առեալ՝ սկսաւ տանջել զքահանայս վասն հաւատոյ, եւ զգլխաւոր քահանայս Սեբաստիոյ²⁶ քաղաքին երկաթեղէն կապանաւք հասուցանեն²⁷ ի դուռն թագաւորին: 4 Եւ ի բանտի չարչարեալ զաւագն²⁸ երիցանցն²⁹ զԳաբրիէլ³⁰, սպանին, զի էր այր ծեր եւ իմաստիւք լի եւ քաջապինդ ի հաւատս աստուածեղէնս: 5 Այս եղեւ ի ՆԼԵ թուականին³¹: 6 Իսկ այլք յաննչան քահանայիցն³² եւ երկու եպիսկոպոսունք Սեբաստիոյ³³ եւ Լառիսոյ³⁴, Սիոն եւ Յովհաննէս³⁵, ի ձեռն նոյն մետրապալաւտին³⁶ ընկալան զժողովն Քաղկեդոնի³⁷ ի բաց կալով ի միաւորութենէն Հայոց: 7 Եւ յայնմհետէ արգելին զժամաձայն Հայոց ի քաղաքէն Սեբաստիոյ³⁸ մինչեւ ցգալ թագաւորին Վասլի

1 A եթե (յայսմ գիշերի) BO եթէ D թէ
2 C ոգիտ
3 A ամպարհաւանութեան
4 ABCD ապուտուփ O ապուտըլուփ
5 C ամիրան
6 O դըւնայ
7 O սմպատ
8 O տէր
9 T1T2 ընդ միմեանս (ABCDEO առ միմեանս)
10 ABCO չի՛ գլուխ
11 AO (գլուխ) Ի
12 O թագաւորութեանն
13 ՆԲ.Ն. ի ժողովրդէս T1 T2 ի ժողովարանէս
14 ABCDO մակեդովնի
15 ABCO մետրապոլտին
16 ABCO սեբաստու
17 A այդ
18 A քաղտատ
19 ABCO թագաւորութիւնն
20 B վասլի

21 ACDO ի մակեդովն B ի մակեդովնեայ
22 E չի՛ (որ) եւ
23 D չի՛ տարեալ d տարեալ
24 C բնակեցոյց
25 ABCDO մետրապոլտն սեբաստու
26 ABCDO սեբաստու
27 BD հասուցանէ T2 հասուցանէր
28 ABCDO զաւագ d զաւագն
29 BD երիցունսն d երիցանց
30 A զգաբրիէլ
31 CEO ի ՆԼԵ
32 ABD քահանայն T1 (այլ) աննչան քահանայ
33 ABDE Բ եպիսկոպոսոս CO Բ եպիսկոպոսոս սեբաստու T2 երկու եպիսկոպոսունք
34 CO զառիսոյ
35 T1T2 Սիոն ADE յոհաննէս E յոհանէս
36 A մետրապալաւտի CO մետրապոլտին B մետրապոլտի
37 ABDO քաղկեդովնի
38 ABCDO սեբաստու

Բանին երկու բնութիւնս եւ երկու կամս¹ եւ հնազանդիմք իբրեւ ուղիղ բանի: 4 Ապա թէ պաճուճանս միայն² դնէք զանուանս նոցա, զաւրէն ռամկի թագաւոր կերպարանեալ, (զի մի ասացից առիւծենեան³ կերպարանեալ զկենդանին զայն, կամ զարծուովն զանց արարեալ զճային առասպել առ⁴ այլոց⁵ հաւուցն գեղեցկութեամբ), ո՞չ ապաքէն խաբէութիւն է առ տգէտս, ո՞վ իմաստունդ յայտոսիկ:

5 Իսկ որոց աչք ի գլուխ, եւ միտք յիմաստութեան⁶, եւ⁷ կատարեալ հասակաւ, եւ կիրթ ճաշակելեալք⁸ նոցա կարողութիւն է ընտրութիւն առնել ի մէջ բարւոյ եւ չարի: 6 Սակս այնորիկ⁹ եւ մեք զհաւատոյս մերոյ զբարեպաշտութիւն¹⁰ յայտնի քարոզեմք եւ գրեմք ի նամակի աստ: 7 Զի ի վերայ լերին բարձու հրամայեցաւ բարձրացուցանել զբարբառն¹¹ հաւատոց, եւ ի Տեառնէ հրամայեցաւ՝ զի¹² յունկանէ լուեալն ի վերայ տանեաց բարձրութեան¹³ ասել եւ քարոզել:

8 Արդ թէպէտ¹⁴ եւ յոլորտս հիւսիսական¹⁵ աշխարհիս բնակեալ եմք, ուր սառնասառոյց¹⁶ ցրտութեան աւզոցն¹⁷ շնչմունք, եւ ըստ մասին սառուցեալ յառաջագոյն անգիտութեան խաւարաւն ոգւոց մերոց՝ անճաճանչ ի ծագմանէ աւե-

տարանական¹⁸ լուսոյն մնացաք հարուստ ամս եւ ժամանակս, սակայն յորժամ այցարար մեզ ի բարձանց Արեգակն արդարութեան ի ձեռն քաջաճայն առաքինութեան եւ չարչարանաց ամեներջանկին¹⁹ Գրիգորի, Լուսաւորչին սրբոյ եւ խոստովանողին Քրիստոսի, որ աստուածասաստ հարուածովք եւ աստուածահրաշ սքանչելեալք²⁰ դարձոյց յանգիտութենէ յաստուածգիտութիւն ճշմարտութեան²¹ զագգսս եւ զթագաւորութիւնս Հայաստանեայց: 9 Յորմէ ուսաք զերրորդութիւնն²² սուրբ խոստովանել եռանձնեայ²³ դիմաւք եւ մի զաւրութեամբ եւ փառաւք եւ աստուածութեամբ երկրպագեալ, համագոյական Հաւր՝ զՈրդին²⁴ եւ զՀոգին սուրբ խոստովանեալ, եւ զնոյն մինն յերրորդութենէն, միածին Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, որ է պատկեր աներեւութին²⁵ Աստուծոյ, լոյս փառաց եւ նկարագիր էութեան Հաւր, իջեալ յորովայն սրբոյ²⁶ կուսին Մարիամով²⁷ կամաւք Հաւր եւ հովանաւորութեամբ սուրբ Հոգւոյն՝ շրջաստեղծեաց ինքեան մարմին միաւորութեամբ Աստուածութեանն²⁸, ծնեալ ի Կուսէն աստուածախառն մարմնով, յառաջ եկեալ անճառաբար եւ առանց ազտոյ, ի փրկութիւն մեզ եւ ամենեցուն, որք կարգան զանուն նորա:

10 Զոր եւ սուրբ Սիւնհոգոսն Նիկիոյ²⁹, որ ի ձեռն Կոստանդիանոսի³⁰ ՅԺԸ հա-

1 BCDEO Բ բնութիւնս եւ Բ կամս
 2 ABCEO միայն պանունանս E պանունանս միայն
 3 ABCE առնծննեալն
 4 ABCDO չի՞ք առ
 5 A այլոց
 6 B իմաստութեան C իմաստութիւն
 7 ABCDEO չի՞ք եւ
 8 ACD նաշակելելք
 9 T₁T₂ այտորիկ
 10 ABDT₁ բարեպաշտութիւն
 11 A ըզբարբառն BD գրարբառ d (գրարբառ)ն
 12 ABCDEO զի փ/ս գ'ի d գ'ի
 13 D բարձրութիւն d (բարձրութիւն)ե(ան)
 14 A թեպէտ
 15 AD հուսական C հիւսական d հիւսիւսական
 16 BD սառնասառուց b (սառնասառ)ոյ(ց)
 17 T₁ (աւոց)լեմ

18 A աւետարական
 19 ACE ամէնեքանկին
 20 ADE սքանչելելք
 21 AOT₁ չի՞ք նշմարտութեան a նշմարտութեան
 22 BD գերրորդութիւն
 23 ABD եռանձնեան C եռանձնեա O խոստովանիլ եռանձնեան
 24 ABCDEO գորդի
 25 C աներեւոյթիւն
 26 CD չի՞ք սրբոյ
 27 ABC մարիամայ
 28 BD աստուածութեան
 29 ABCD նիկիա O նիկիայ
 30 A կոստանտիանոսի

րանցն¹ սակս Արիոսի չարափառութեանն² ժողովեալք, ընդ որս եւ մերն Ռատակէս³ որդի սրբոյն Գրիգորի զնոյն⁴ ասացեալ եւ քարոզեալ ծագաց տիեզերաց՝ նոցին դաւանութեանն⁵ ձայնակցեալ: 11 Եւ երկրորդ ժողով⁶ ՃԾ հարցն, որ ի Կոստանդնուպոլիս⁷, ի ձեռն բարեպաշտ թագաւորին Թէոդոսի, ընդդէմ Մակեդոնի⁸ հոգեմարտ⁹ հայհոյչին. ընդ որս եւ սուրբ հայրապետն Հայոց Ներսէս: 12 Սոցս սակի եւ միաբարբառէ¹⁰ եւ երրորդ ժողովն յԵփեսոս¹¹ Ն հարանցն¹², ի ձեռն Թէոդոսի Փոքուն բարեյաղթ թագաւորի¹³ ժողովեալ՝ ի¹⁴ յանդիմանութիւն եւ յեղծումն մարդազաւան աղանդիցն¹⁵ Նեստորի. ընդ որս միաբանեաց թղթովք եւ սուրբն Սահակ¹⁶ հայրապետն Հայոց եւ Մեսրոբ¹⁷ երանելի վարդապետն մեր:

13 Ի սոցանէ ուսեալք՝ զսոցայն խոստովանիմք հաւատ, յոր դաւանէաքն եւ ուսաք, ե՛ւ մկրտեցաք. ե՛ւ պահեմք զգեղեցիկ աւանդութիւն հայրենատուր¹⁸ ժառանգութեանցն¹⁹. եւ իբրեւ զգոյն ի մարմ-

նի՝ անշրջելի²⁰ մնայ²¹ ի սիրտս եւ յոգիս մեր:

14 Այլ զի մի՛ երկայնագոյն բանիւ ցնդեացուք, իբրեւ զՂուրս²² ընդ դաշտս²³ տարածեալ եւ ոչ պնդեալ խողովակալ՝ հարցանեմք իբրեւ ընդ աշակերտս Առաքելոցն եւ սուրբ հարանցն: 15 Ո՞ւր արդեալք²⁴ ի սոցանէ գրեցաւ կամ քարոզեցաւ՝ բաժանեալ բնութեամբ եւ բաժանեալ²⁵ կամաւք Քրիստոս. զիա՞րդ ասէք բաժանեալ²⁶ բնութիւն աստուածախառն մարմնոյն, որ ո՛չ ի սերմանէ, այլ²⁷ ի սրբոյ Հոգւոյն նիւթեցաւ եւ ի բարձանցն²⁸ ծագմանէն, եւ ի ծնանելն²⁹, որպէս ասաց Գաբրիէլ³⁰ սուրբ կոչեցեալ եւ Որդի Բարձրելոյն³¹:

16 Ո՞ր բնութիւն է Որդի Բարձրելոյն³², կամ զո՞ր բնութիւն ասէք Փրկիչ եւ Աւծեալ եւ Տէր, որպէս ասաց հրեշտակն առ հովիւսն³³. ո՛չ երկու բնութեամբ³⁴, զորոյ զփառսն, ասէ, տեսաք՝ իբրեւ զմիածնի առ ի Հաւրէ՛: 17 Ո՞ւմ արդեալք³⁴ զփառսն հայրենի ասէք, մարմնո՞յն եթէ³⁵ Աստուածութեանն: 18 Եւ յերեւել Երրորդու-

1 T1 328 հարանցն
 2 D չարափառութեան
 3 ACE ռատակէս O ռեստակէս
 4 AEO զնոյնն
 5 B դաւանութեան
 6 ADEO եւ երկրորդ ժողովն
 7 A կոստանդնուպոլիս B կոստանտնուպոլիս CO կոստանդնուպոլիս
 8 ABDE մակեդոնի
 9 AB հոգեմարտ C հոգեմարտ T2 հեգեմարտ
 10 ABCO չի՛ք է
 11 B Եփեսոսի
 12 T1R 200 (հարանցն)
 13 ABCDO ի ձեռն Թէոդոսի փոքուն (BD փոքուն) ժողովեալ բարեյաղթ (B բարեյաղթ) թագաւորի
 14 A չի՛ք ի (յանդիմանութիւն)
 15 ABDO աւանդիցն նեստորի C նեստորի աւանդիցն
 16 A սուրբն սահակ a (սուրբն) ի (սահակ) O իսահակ
 17 BE մեսրոպ O մեսրովպ
 18 B հայրատուր
 19 O ժառանգութեանց BD ժառանգութիւն d (ժառանգութեանց

20 A անշրջելի
 21 ABCO մնայ
 22 AE իբրեւ զըստ
 23 O ընդ դաշտ B ի (դաշտս)
 24 ADE արդեալք
 25 ABD բարձանեալ (կամաւք)
 26 BD չի՛ք բնութեամբ... ասէք բաժանեալ (բնութիւն) d (բարոզեցաւ) բաժանեալ բնութեամբ եւ բաժանեալ կամաւք Քրիստոսի, զիարդ ասէք
 27 A այլ
 28 ABCDEO ի բարձանց
 29 ABCDE չի՛ք ի (ծնանելն) O զծնեալն
 30 A գաբրիէլ
 31 a (բարձրելոյն) D բարձրելոյ d (բարձրելոյն)
 * Ղ.՝-Կ. Ը 35
 32 C չի՛ք ո՞ր բնութիւն է որդի բարձրելոյն O բարձրելոյ
 ք Ղ.՝-Կ. Ը 11
 33 C բնութիւն O բնութեամբ o բնութիւն BCDO Բ (բնութիւն)
 ք Յ.՝-Կ. Ը 14
 34 ACE արդեալք D արդեալք
 35 A եթե C թէ

թեանն¹ ի Յորդանան գետ ի մկրտութիւն Որդւոյ, յորում Հոգին սուրբ ի նմանութիւն աղաւնոյ գայ ի վերայ նորա, եւ ձայն հայրենի ի յայտնութիւն տրեգերաց եկեալ, թէ «Դա² է Որդի իմ սիրելի», յանդգնեսցի՞ս արդեաւք³ եւ ըստ բնութեանցն բաժանել եւ զբարբառն հայրենի: 19 Եւ նոյն ձայն ի լերինն, ի ծագման փառացն Տեառն՝ որո՞յ բնութեան արդեաւք⁴ ասաց Որդի եւ Սիրելի: 20 Եւ յորժամ զսահման սիրոյն Աստուծոյ առ աշխարհս յայտնէ աստուածաբան Աւետարանիչն, ո՞չ ապաքէն ասէ, թէ «զմիածինն ետ»⁵. եւ ո՞ւր արդեաւք⁶ ետ եթէ⁷ ոչ ի խաչն եւ ի մահ: 21 Արդ բաժանեա՛ զՄիածինն, թէ՞⁸ ո՞ր արդեաւք⁹ բնութիւն էր, ո՛վ քաջ, որ տուաւ¹⁰ ի Հաւրէ:

22 Ձոր բացափայլ լուսաւորութեամբ նոյն ինքն Աւետարանիչն վասն անբաժանելի եւ անճառ միաւորութեանն¹¹ երբեմն զմարդկութիւնս¹² աստուածութիւն անուանէ, եւ երբեմն զաստուածութիւնն մարդ եւ որդի մարդոյ կոչէ. քանզի «Յերկինս¹³, աւսէ, ո՛չ ոք ել, եթէ¹⁴ ոչ՝ որ էջն յերկնից¹⁵ Որդին մարդոյ, որ էն յերկինս»¹⁶: 23 Եւ յորժամ զայս ասաց Տէրն¹⁶, ո՛չ յերկինս էր մարմնովն, եւ ո՛չ կանխաւ յերկնէ իջեալ

մարմին¹⁷, որպէս Եւտիքեայ¹⁸ թուեցաւ, այլ¹⁹ զաստուածութիւնն կոչեաց որդի մարդոյ՝ «Եւ տեսանիցէք զորդի²⁰ մարդոյ, զի ելանիցէ ուր էր²¹ գառաջինն»²¹. եւ զիա՞րդ նախ քան զմարդանալն զորդին մարդոյ յերկինս ասիցէ: 24 Բաժանեա՞²² աստանաւր զբնութիւնն, ո՛վ նոր աւետարանիչդ. ո՞չ ապաքէն նոյն ինքն միածինն ի Հաւրէ եւ կուսածինն²³ ի մաւրէ անորոշաբար ասաց, եթէ²⁴ «Խնդրէք զիս սպանանել, մարդ՝ որ զճշմարտութիւն²⁵ ընդ ձեզ խաւեցայ, զոր ուսայ²⁶ ի Հաւրէ իմմէ»²⁵: 25 Եւ յորժամ ինքն զաստուածութենէ²⁷ իւրմէ հարցանէր՝ «Ձորդւոյ մարդոյ զի՞նչ ասէք»²⁸ եւ յայտ առնէ խոստովանութեամբ պատասխանին Պետրոսի, զի որդի Աստուծոյ դաւանեաց²⁹: 26 Եւ մեկնէ բերան²⁸ ոսկի Յովհանն²⁹, եթէ զաստուածութիւնն³⁰ կոչէ որդի մարդոյ, եւ զվերագոյն զրեալսդ ի վկայութիւն բերէ, եթէ³¹ ո՛րպէս բազում անգամ ասէ զաստուածութիւնն³² որդի մարդոյ:

27 Ձայսքան բազմապատիկ եւ հզաւրագոյն բացերեւութեամբ զխորհուրդ միաւորութեան մարմնացելոյ Բանին Աստուծոյ թողեալ՝ յերկուս պատառէք զմիա-

1 B երրորդութեան
 2 A թե BCEO թէ «Դայ է...»
 * Մատթ. Գ. 17. Գ. 14. Գ. 22
 3 AC արդեւք
 4 ACE արդեւք
 5 Յովհ. Գ. 16
 6 ACDE արդեւք
 7 A եթե
 8 B ի մահն
 9 A թե
 10 AC արդեւք
 11 B տուաւ
 12 BD միաւորութեան
 13 (ABCDE զմարդկութիւն) T₁T₂ զմարդկութիւնն
 14 CE յերկին
 15 A եթե
 16 B երկնից
 17 Յովհ. Գ. 13
 18 T₁O զայս տէրն ասաց

17 ACE մարմինն
 18 ABD Եւտիքեայ C Եւտիքեայ
 19 A այլ
 20 ABCO զորդին (մարդոյ) T₁ Որդի (մարդոյ)
 21 O էրն
 * Յովհ. Գ. 63
 22 ACE բարձրեալ
 23 B կուսածին
 24 A եթե
 25 AC O զճշմարտութիւնն
 26 D ուսաւ d (ուսալ)
 27 Յովհ. Գ. 40
 28 ACEO զաստուածութիւնն
 * Մատթ. Գ. 15
 29 Մատթ. Գ. 16
 28 ABCO բերանն ոսկի
 29 BD յոհան
 30 BDO զաստուածութիւն
 31 A եթե BCDO թէ
 32 BD զաստուածութիւն C զաստուածութեանն

ւորութեան¹ պատմուճանն՝ զանազանեալ բնութեամբ եւ կամաւք, զոր ոչ գրեցին եւ ոչ քարոզեցին Առաքեալքն:

28 Որո՞վ բնութեամբ ըստ մարմնոյ զԲրիստոսն² Պաւղոս Աստուած ի վերայ ամենայնի ասէ՞, կամ ո՞ր կերպարանի եւ բնութեան ամենայն ծուներ կրկնի՞³. մարմնո՞յն եթէ³ աստուածութեանն⁴: 29 Բաժանեա՛ երկու բնութեանն⁵ եւ երկուս երկրպագութիւնս⁶. (քանզի ոչ իշխէք ասել երկուս⁷ երկրպագութիւնս, թէպէտ⁸ եւ յոյժ էք բաժանասէրք, եւ եթէ⁹ ասէք զմի եւ զնոյն զերկրպագութեանն¹⁰, զերկրպագութիւնն¹¹ բաժանէք, եւ աւտար ոմն Աստուած ի ներս¹² ածէք): 30 Այլ¹³ որպէս մի երկրպագութիւն խոստովանիք՝ հարկ է ձեզ եւ ահամայ, թէպէտ եւ ոչ կամիք՝ միութիւն¹⁴ խոստովանել Տնաւրինեցելոյն. քանզի ոչ երկրպագի մարդկային բնութիւն ըստ աստուածութեան¹⁵, եւ ոչ իսկ վայել է երկնաւորացն երկիր պագանել երկրային բնութեան. ընդ որս եւ հասարակաց բնութիւն ամենայն մարդկութեանս երկրպագէ՞¹⁶ յաղազս մեզ բնութեանակից լինելոյ:

1 AC զմիաւորութեանն
2 ACO Բրիստոսն
3 Հռովմ. Թ 5
4 Փ Գ Գ Գ Գ 9-10
5 A եթե
6 BD աստուածութեան
7 ABCDEO բարձանեա Բ բնութեանն
8 ABCDEO երկուս եւ երկրպագութիւն ABCDO չի՞ք եւ (երկուս)
9 ABCDO չի՞ք երկուս (երկրպագութիւնս)
10 A թեպէտ եւ
11 A եթե
12 B գերկրպագութիւն
13 ACDEO գերկրպագութիւն (բաժանէք)
14 ACDEO ի ներս ածէք
15 A այդ
16 a միոթիւն
17 ACO ընդ աստուածութեանն
18 ABCDO երկրպագի

31 Ո՛վ անբանութեանս¹⁷, մանաւանդ եթէ¹⁸ անգիւտ մոլորութեանս. պարտ է ձեզ ի մէջ երկուց բնութեանցն¹⁹ այլ²⁰ եւս բնութիւն խնդրել, զի ճողոպրիցիք ի հայհոյութեանէ²¹, կամ յեւս մեծագոյն հայհոյութիւն անկանիցիք²²: 32 Արդ զայս կնքէ մեծն Կիւրեղ յեւթներորդ²³ գլուխ երկուտասան գլխոցն²⁴. «Եթէ²⁵ ոք ոչ, ասէ, միով երկրպագութեամբ եւ փառաւորութեամբ պատուեսցէ զէմմանուէլն²⁶, նզովեա՛լ եղիցի»: 33 «Բարձրացուցանել, ասէ Պաւղոս, եւ անուն շնորհել գեր ի վերոյ քան զամենայն անուն մարմնոյ»²⁷. եւ զի՞նչ իցէ գեր ի վերոյ²⁷ անունն, եթէ²⁸ ոչ՝ Աստուած: 34 Եւ զիա՞րդ ոք յանդգնի²⁹ ասել երկուս³⁰ Աստուածս: 35 Քանզի Բանն եւ յառաջ իսկ ունէր զաստուածութեանն³¹ անուն, եւ զի զկնի անճառ միաւորութեանն³² եւ խառնելոյ զանխառնելի բնութիւնսն՝ եւ զառեալ մարմինն³³ աստուածացոյց եւ եղեւ ըստ բնութեան առողին եւ ըստ զաւրութեան, որպէս³⁴ Գրիգոր Աստուածաբան³⁵ ասէ. եւ դարձեալ յայլում¹

17 A ով անբանութեանս B ով անբանութեան CE ով անբանութեանս
18 A եթե
19 T1T2 երկուցն բնութեանց
20 A այդ եւ
21 ACEO ի հայհոյութեանէ
22 B չի՞ք ի հայհոյութեանէ կամ յեւս մեծագոյն D չի՞ք կամ յեւս մեծագոյն հայհոյութիւն ձ կամ յեւս մեծագոյն հայհոյութիւն
23 A Կիւրիղ յեւթներորդ BDO յէ երորդ T2 յեթներորդ C յեւթներորդ
24 B ԲԺ.ն D ԲԺ ան O ԲԺ ն (գլխոցն)
25 A եթե
26 a (գե)մ(մանուէլն) BC զէմանուէլն O զեմանուէլն
27 Փ Գ Գ Գ Գ 10
28 C գեր ի վերոյ
29 A եթե
30 CE անդգնի ասել
31 A երկու BCDO Բ (Աստուածս)
32 BD միաւորութեան
33 BD մարմին
34 O (որպէս) եւ
35 BE աստուածաբանն

ճառի՝ եթէ «Զաստուածային պատկերն ընդ մարդկային կերպարանն խառնեաց, եւ ծանեալ տունն Իսրայէլի², թէ Տէր եւ աւծեալ զնա Աստուած արար»։ զոր մեկնեալ իւր նոյն ինքն Աստուածաբանն³, յոր⁴ դուքն պարծիք, ի մերն պարծանք՝ եթէ Աւծեալ եւ Քրիստոս կոչեցաւ, ո՛չ զաւրովեամբ ըստ այլոց աւծելոց⁵, այլ մերձաւորութեամբ⁶ բովանդակ Աւծաւղին⁷, որոյ գործ էր՝ մարդոյն լինել աւծեալ եւ առնել Աստուած զաւծեալն։

36 Բաժանեա՛ր⁸ արդ զաւծեալդ անուն յերկուս⁹ բնութիւնս, եւ ցո՛յց զմիջոց երկուց Աստուծոց ըստ երկու բնութեանց¹⁰։ 37 Եւ զի ոչ կարես, պարտ է քեզ¹¹ խոստովանել՝ մի Տէր, մի Քրիստոս, մի Աստուած, եւ մի բնութիւն։

38 Ե՛կ չըջեցոցից զքեզ եւ ընդ այլ¹² բանսն Աստուածաբանին¹³։ 39 Յորժամ ասէ, թէ «Ոչ միայն զաստուածութիւնն ասեմ կատարեալ, այլ¹⁴ եւ զմարմինն աւծեալ յաստուածութենէն¹⁵ եւ եղեալ՝ որպէս որ էաւծն¹⁶։ եւ համարձակիմ ասել մի Աստուած»՝ զի՞նչ զայս իմանաս¹⁷, ո՛վ բնութիւնասէրդ, եւ զիա՞րդ զմի Աստուածն յերկուս¹⁸ բնութիւնս բաժանես։ 40 «Եկեալ՝ Աստուած հանդերձ առեցելովն, մի յեր-

կուց ընդդիմակցացն¹⁹, ի՞²⁰ մարմնոյ ասեմ եւ հոգւոյ, յորոց մին²¹ աստուածացոյց եւ միւսն²² աստուածացաւ»։ զաստուածացեալն²³ զիա՞րդ իշխես աւտար բնութիւն ասել։ 41 Զի՞նչ իցէ նորաձեւութիւն բնութեանցն ըստ աստուածաբանին²⁴, եթէ²⁵ ոչ՝ միութիւն։ քանզի Աստուած մարդ լինի. ո՛չ՝ որ ինչ էրն՝ փոխեցաւ, այլ զոր ինչ ոչն էր՝ էաւ. զի տարեալ լիցի անտանելին միջնորդաւ հոգւոյն աւծութեանն²⁶, միջնորդելով եւ մարմնոյն թանձրագուլնի։

42 Աստանաւր պարտ է զարմանալ. միջոց ասաց զմարդկային հոգին՝ մարմնոյն²⁷ եւ աստուածութեանն խառնման։ 43 Ո՞չ ահա²⁸ յայտ է, եթէ բաժանումն²⁹ առնես բնութեանցն, ո՛չ միայն երկու³⁰, այլ³¹ եւ երիս բնութիւնս հարկ լինի քեզ խոստովանել՝ զմիջոցն³² յաւելլովն. եւ եթէ³³ բառնաս՝ ո՛չ լինի խառնումն երկուցն³⁴, եւ ո՛չ Աստուած մարդ լինի. եւ ամենքեան զրկեալք ի փրկութենէն։ 44 Տեսանե՛ս՝ ո՛ւր արդեաւք³⁵ բաժանումնդ³⁶ քո վարէ զքեզ։ 45 Նա ի նոյն ճառի ոչ միայն խառնմամբ³⁷ զաստուածային բնութիւնն³⁸ ընդ մարդկային³⁹ բնութեան՝ ասէ, այլ² եւ

1 A յայդում՝ նաոի
 2 A իսրաիդի
 3 ACDEO աստուածաբան
 4 C որ (դուքն)
 5 A ըստ այդոց CE օծելոյ
 6 ACD մերձաւորութիւն
 7 A ամոնիկն BCDO օծողիկն
 8 ACE բարձանեա՛
 9 C յ Բ ս
 10 CO բնութեան
 11 AB ձեզ (խոստովանել)
 12 A այդ BD չի՞՛ այլ d այլ
 13 T₁T₂ Աստուածաբանի
 14 A այդ եւ
 15 ACEO յաւծութեանէն փիս յաստուածութեանէն
 16 CE որ է օծն O էօծն D որ էօծն
 17 ACEO յիմանաս
 18 CD յ. Բ

19 CO ընդդիմակցայցն
 20 ABCDEO չի՞՛ ի (մարմնոյ)
 21 ABCDO միմն
 22 CE միմն փիս միւսն
 23 B և (զաստուածացեալն)
 24 ACEO ըստ աստուածաբանի BD T₁ ըստ աստուածաբանից
 25 A եթե
 26 BD օծութեան d (օծութեան)ն
 27 B մարմնի
 28 O ահայ
 29 A բարձանումն
 30 ABCDEO Բ
 31 A այդ եւ
